



**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԻՏՈՒՏ**

**ԳԻՏԱԵԹՈՊԱԿԱՆ ՀԱՆՈՒՄ**

**ՀԻՍՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԻՏՈՒՏ**

**Գլխավոր խմբագիր՝ Կարինե Թորոսյան**

**ՆԱԽԱՇԱԿԻՂ  
4.2012**

**Խ մ ք ա գ ը ա կ ա ն ի ն ը ի ի ն ը ի ը**

Յուզբաշյան Յուրա - գ/դ, ՀՊՄՀ

Աստվածատրյան Մելանյա - գ/դ, ՀՊԼՀ

Գալստյան Աշոտ - գ/թ, ՀՊՄՀ

Հովհաննիսյան Արուսյակ - գ/թ, ՀՊՄՀ

Խաչատրյան Հեղինե - գ/թ, ՀՊՄՀ

Միտոյան Հասմիկ – ԿԳՆ հանրակրթության վարչության  
ն/դ կրթության գլխավոր մասնագետ

Ավետիսյան Լարիսա-բ.գ/դ, ԵՊԲՀ

Ծառուկյան Ռուզաննա - «Քայլ առ քայլ» հիմնադրամ

Պետրոսյան Մարիամ – ԿԱԻ

Թամիրոզյան Կարինե - գ/թ, ԿԱԻ

Քարամյան Ռուզաննա - Երևանի թ. 55 դպրոց

Ալավերդյան Անուշ - Երևանի թ. 51 դպրոց

Միմոնյան Գոհար – Երևանի թ. 4 դպրոց

Հովհաննիսյան Անահիտ - Երևանի Աջափնյակ վարչական շրջանի կրթության,  
մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Հրատարակչական խմբագիր՝ *Մարիամ Պետրոսյան*

«Ն ա խ ա շ ա վ ի ղ» հ ա ն դ ե ս ի ա շ խ ա տ ա կ ա գ մ

Մնբատյան Լալա - համակարգող, ԿԱԻ

Ամիրբեկյան Գոհար - խմբագիր-սրբագրիչ, ԿԱԻ

Միրզաբունյան Աստղիկ - համակարգչային օպերատոր, ԿԱԻ

ՀԱՆՁՆԵՆ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵՏԻ 67, ՀԷՆ՝ 57-21-52, 57-21-40

ՀԱՆՁՆՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ՝ 25. 08. 2012: ԾԱՎԱԼԸ՝ 4 ՏՊ. ՍԵՄՈՒԼ: ՏՊԱԾԵՆԱԿ՝ 2310:

ԹՈՒՐԹ՝ ՕՅԱԵԹ: ՉԱՓԱՆ՝ 70X100 1/16: ԳԻՆԸ՝ 840 ԴՐԱՄ:

ԴՊՐՈՅԱԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

ԳՐԱՆՅԱՆԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ 1004:

375111, 67 Tigran Metsi, Yerevan, Armenia. Phone 572152, 572140.

Printed 2310 semples.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՄԵԹՈՎԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

<i>Մայրենի</i> .....	3
<i>Մաթեմատիկա</i> .....	9
<i>Ես և շրջակա աշխարհը</i> .....	11

## ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ

### Կ. ՉԻՐՈՒՅՅԱՆ

<i>Դասը՝ որպես ուսուցման գործընթացը կազմակերպելու հիմնական ձև</i>	13
---	----

### Ա. ԱՐԱՅԱՆ

<i>Կրտսեր դպրոցականի ինքնուրույն հետազոտական գործունեությունը</i>	19
---	----

### Ա. ԱՐՇԱԿՅԱՆ

<i>Խոսքային նմուշները և ռեպլիկները՝ որպես բանավոր հաղորդակցության կարողությունների ձևավորման նախադրյալ</i> .....	26
--	----

## ԴՊՐՈՅԻ ՀԵՄԻՆ

### Ս. ԱՎԵՏԻԱՅԱՆ

<i>Մենք բնության մի մասնիկն ենք</i> .....	35
---	----

### Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

<i>Դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը երաժշտական խաղերի միջոցով</i> .....	43
--	----

### Ն. ՊՈՊՈՒՅԱՆ

<i>Մանկատան երեխաների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները</i> .....	53
---	----

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### Լ. ՏԻԳՐԱԿՅԱՆ

<i>Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը</i> .....	59
--	----

<i>ՆՈՐ ԳՐՔԵՐ ԶԵՋ ՀԱՄԱՐ</i> .....	64
----------------------------------	----



## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

### ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑ

#### Մ Ա Յ Ր Ե Ն Ի

Նոր ուսումնական տարվա նախաշեմին տարրական դասարանների ուսուցիչներին սպասում են մի շարք նորություններ՝ առարկայական ծրագրերի, մեթոդական ուղեցույցների, ուսումնաօժանդակ նյութերի և գնահատման համակարգի վերաբերյալ:

2012- 2013 ուստարում ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում «Մայրենի» առարկայի ուսուցումը կիրականացվի ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված նախորդ տարվա դասագրքերով՝ բացառությամբ չորրորդ դասարանի դասագրքերի, որոնց լրամշակված հրատարակությունները կշրջանառվեն այս տարի: Դրանք են՝

1. Կ. Թորոսյան և ուրիշներ, «Մայրենի-4», դասագիրք, Եր., «Մանմար»:
2. Դ. Գյուրջինյան և ուրիշներ, «Մայրենի-4», Եր., «Էդիթ Պրինտ»:

Ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի 19.01.2011 թվականի N 30-Ա/Ք «Հանրակրթական առարկաների վերանայման, լրամշակման և (կամ) բեռնաթափման ենթակա չափորոշիչների և ծրագրերի ցանկը և ժամանակացույցը հաստատելու մասին» հրամանի՝ 2011-2012 ուստարում ԿԱԻ մասնագետների կողմից ստեղծված հանձնախումբն իրականացրել է տարրական դպրոցի «Մայրենի» առարկայի չափորոշիչների և ծրագրերի վերանայման ու բեռնաթափման աշխատանքներ:

Չափորոշիչի ու ծրագրերի վերանայման (բեռնաթափման) հիմքում ընկած են «Մայրենի» ուսումնական առարկայի դասավանդման հետևյալ դրույթները.

1.Մայրենիի համակցված դասընթացը պետք է նպաստի ոչ այնքան լեզվաքերականական գիտելիքների հաղորդմանը, որքան, որպես գործնական միջոց, դրանց ծառայեցմանը լեզվամտածողության և գրագետ խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը: **Ուստի մայրենիի դասավանդման նպատակներից կարևորագույնը աշակերտների ընթերցողական կարողությունների զարգացումն է և գեղարվեստական տեքստի լիարժեք ընկալման համար պայմանների ապահովումը:**

2.Լեզվական նյութը պետք է ուսուցանել ըստ մատչելիության, գործածման հաճախականության, կապակցված խոսքի կառուցմանը նպաստող դերի՝ հաշվի առնելով լեզվի գործնական ուղղվածության և հաղորդակցական



կարողությունների զարգացման պահանջները: Դրանցից ելնելով՝ բեռնաթափման աշխատանքների ժամանակ չափորոշիչներում և ծրագրերում կարևորվել են լեզվական այն երևույթներն ու հասկացությունները, որոնք ունեն գործնական նշանակություն և նպաստում են ճիշտ խոսք կառուցելու, մայրենի լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև խթան են ստեղծագործական ունակությունների զարգացման համար:

**Հետևություն.** չափազանց կարևոր է մայրենիի ժամերը բեռնաթափել քերականական գիտելիքատվությունից և ուշադրությունը սևեռել տեքստի ուղղությամբ կատարվող աշխատանքներին: Լեզվական և գրական գիտելիքները տրվում են նվազագույն չափով՝ առանց գիտական եզրույթներով և սահմանումներով ծանրաբեռնելու, իսկ ուսուցումը կատարվում է հիմնականում գործնական եղանակով:

Բեռնաթափման և լրամշակման արդյունքում, համաձայն **ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. օգոստոսի 29-ի N1 000-Ա/Ջ հրամանի, հաստատվել են հանրակրթական հիմնական դպրոցի Մայրենի առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը:** Այս ուսումնական տարվանից գործածության մեջ են դրվում տարրական դպրոցի «Մայրենի» առարկայի բոլոր դասարանների լրամշակված չափորոշիչներն ու ծրագրերը, որոնց մասին ուսուցիչը կարող է տեղեկանալ ԿԱԻ [www.waniedu.am](http://www.waniedu.am) կայքում:

Չափորոշչում և ծրագրերում կատարված փոփոխությունները ներկայացնենք առավել հստակ:

Ծրագրի՝ «Կարդալու հմտություններ» և «Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ» բաղադրիչներում հստակեցվել և մանրամասնվել են կարդալու որակական հատկանիշների պահանջները, և «Գործունեության տեսակներ» սյունակում տրվել են ավելի կոնկրետ ուղղորդումներ:

«Հասկացողություն տեքստի մասին» բաղադրիչը միավորվել է «Կապակցված խոսք» բաղադրիչի հետ՝ վերանվանվելով «Խոսք և հաղորդակցում»: Միավորման հետևանքով որոշ պահանջներ թեթևացվել են՝ շեշտադրելով աշակերտների հաղորդակցական կարողությունները:

«Գրականագիտական տարրական գիտելիքներ» բաղադրիչը վերանվանվել է «Գրական տարրական գիտելիքներ»:

Հայոց լեզվի ծրագրում լեզվաբանության բաժինների անվանումները (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն) չեն ներկայացվում որպես գլխաբառ-ենթավերնագրեր՝ այդ բաժիններից ուսուցանվող գիտելիքներին առավել գործնական ուղղվածություն տալու նպատակադրմամբ:

Չափորոշիչից և ծրագրից հանվել են տարրական դպրոցին ոչ մատչելի այնպիսի հասկացություններ և եզրույթներ, ինչպիսիք են՝

- մենիմաստ և բազմիմաստ բառեր
- նախածանց, վերջածանց
- քանակական և դասական թվականներ
- շաղկապ, ձայնարկություն
- դատողական տեքստ

Ի դեպ՝ առաջին հայացքից թեթև միջամտություն թվացող այս մոտեցումը կնպաստի դասավանդման գործընթացում գերծ մնալ քերականական ուղղվածությունից:

Ինչ վերաբերում է վերը նշված փոփոխությունների և գործող դասագրքերի համապատասխանությանը, ապա պետք է փաստել, որ տարրական դպրոցի ծրագրերը ներկայացված են հետևյալ բաժանումներով՝ ընթերցանություն (իր տարբեր բաղադրիչներով), **լեզվական և գրական տարրական գիտելիքներ, կապակցված խոսքի ուսուցում և առարկայական ինտեգրում**: Ծրագրի այս ենթաբաժիններին առանձին ժամեր հատկացված չեն, քանի որ սրանց պահանջներն իրականացվում են ուսումնական ողջ գործընթացում՝ առանձին տեքստերի շուրջ տարվող աշխատանքների համատեքստում: Ուսուցիչների համար այս պահանջների կատարումն ավելի դյուրին դարձնելու նպատակով ստեղծված է «Մայրենի» վերնագրով մեթոդական ձեռնարկ («Ձանգակ-97» հրատ., 2011թ.), որտեղ ներկայացված են մայրենիի դասերի արդյունավետ ուսուցմանը միտված մեթոդական ցուցումներ և 2-4-րդ դասարանների թեմատիկ պլանավորումներ:

Ձեռնարկի թեմատիկ պլանավորումների բաժնում տրվում են ոչ միայն ուսուցանվող նյութին հատկացված ժամաքանակները, այլև ուսուցման նպատակներն ու ուսումնառության ընթացքում ակնկալվող արդյունքները:

Դասավանդման գործնական ուղղվածությունն ապահովելու նպատակով լեզվական նյութի ուսուցումն ուղղախոսական, ուղղագրական, քերականական գիտելիքներ հաղորդելու ոչ արդյունավետ միտումից անհրաժեշտ է անցում կատարել խոսքային գործունեության իրականացմանը, այսինքն՝ զարգացնել բազմապիսի խոսքային իրադրություններում սովորողների հաղորդակցական կարողությունները, զանազան թեմաների շուրջ ինքնուրույն բանավոր ու գրավոր խոսք կառուցելու հմտությունները, իրենց մտքերը, գիտելիքները, հույզերն ու զգացումներն ազատորեն և լեզվաքերականական ճիշտ ձևավորումով արտահայտելու ունակությունները: Այս առումով դասագրքերում էական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացել, պարզապես փոխվել են մայրենիի դասավանդման նպատակների շեշտադրումները: Ուստի հարկ է, որ ուսուցիչներն իրենց աշխատառժամ իրականացնեն համապատասխան փոփոխություններ:



Տարրական դպրոցում հայոց լեզվի և ընթերցանության միասնացված ուսուցումն ընձեռում է լայն հնարավորություններ՝ նյութի յուրացումը գերազանցապես գործնական ճանապարհով սպասկովելու համար: Քերականության ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնների ու սահմանումների ինքնանպատակ սերտմանը, այլ քերականական ձևերի՝ խոսքի մեջ ճիշտ և տեղին կիրառմանը: Այդ նպատակադրումով էլ առաջին դասարանի ծրագրային նյութից հանվել է «Անձ և իր, առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր, դրանց առաջադրվող հարցերի իմացություն» թեման (այն տեղափոխվել է երկրորդ դասարան), թեև առաջին դասարանի մայրենիի դասագրքում այդ փոփոխությունն առայժմ արտացոլված չէ: Իսկ չորրորդ դասարանի բարեփոխված ծրագրում ներառվել է «Բարդ նախադասություն» հասկացությունը:

Լեզվական տարբեր իրողություններ ուսումնասիրելու նյութ է ծառայում տեքստը, որի մեջ փոխադարձ կապերի ու կախվածությունների մեջ դրսևորվում են լեզվական տարբեր մակարդակների միավորները, դրանց բնորոշ լեզվաքերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Կարծում ենք՝ ուսուցիչը գործնականում կարող է տեքստերի շուրջ տարվող աշխատանքների շարքում տեղ տալ նաև բարդ նախադասությունների կառուցվածքային տարբերությանը՝ հենվելով պարզ նախադասությունների վերաբերյալ աշակերտների գիտելիքների վրա:

Լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալ բառին ու դրա իմաստին, ճիշտ բառօգտագործմանը, բառերի իմաստային և քերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի և բառաձևերի դերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, իմացական դաշտի ընդլայնմանը:

Բարեփոխված ծրագրերում հատկապես մեծ ուշադրություն է դահցվում հաղորդակցական կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Կարևոր պահանջ է լեզվագործածության ուսուցումը հաղորդակցման տարբեր պայմաններում: Այստեղ առաջնահերթ նշանակություն ունեն ուսումնական գործունեության այն ձևերը, որոնք պետք է հնարավորություն տան զարգացնելու սովորողի խոսքային կարողությունները՝ կախված կոնկրետ իրադրությունից, խոսողի նպատակից, ունկնդիրների (լսարանի) առանձնահատկություններից և այլ հանգամանքներից: Թեև այս պահանջներն առանձին առաջադրանքների տեսքով արտացոլված են գործող դասագրքերում, սակայն

ուսուցիչներին առավել օգնելու նպատակով 2011թ. հրատարակվեց և դպրոցներին անվճար տրամադրվեց Կ. Թորոսյանի, Գ. Թերզյանի, Հ. Խաչատրյանի «Խոսք և հաղորդակցություն» մեթոդական ձեռնարկը, որը կօգտագործվի ծրագրի «Խոսք և հաղորդակցում» ենթաբաժնի վերոհիշյալ պահանջներն իրականացնելու նպատակով:

Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը, տեսությունն ու պրակտիկան: Նոր ուսումնական տարում ուսուցիչների մեթոդական գրադարանը կհարստանա մի շատ անհրաժեշտ ձեռնարկով՝ «Գործնական աշխատանքները մայրենիից»: Ձեռնարկի նպատակն է օգնել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ կազմակերպելու աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունը, սովորեցնել նրանց մտածել, առանձնացնել գլխավորը երկրորդականից, կատարել ինքնուրույն մտահանգումներ: Ձեռնարկում ընդգրկված են մեթոդական երաշխավորություններ՝ տարրական դասարանների «Մայրենի» առարկայից գնահատման համակարգի բաղադրիչներից մեկի՝ գործնական աշխատանքների բովանդակության, դրանց կիրառման մեթոդների, ինչպես նաև տրված են մեկնաբանություններ՝ աշակերտների գործնական, հետազոտական, նախագծային աշխատանքների տեսակների ընդհանրությունների և առանձնահատկությունների վերաբերյալ:

2012 թ. հրատարակվեցին նաև «Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում» ձեռնարկները I-II, III-IV դասարանների համար: Դրանցում ներառված են տարրական դասարաններում գործածվող գրավոր աշխատանքների բոլոր տեսակները (արտագրություն, թելադրություն, փոխադրություն, շարադրություն), ինչպես նաև դրանց ճիշտ կիրառման վերաբերյալ մեթոդական երաշխավորություններ:

2012-2013 ուստարում ընթացիկ գնահատման միավորային բաղադրիչի և նրա ենթատեսակների հետ կապված փոփոխություններ չեն նախատեսվում:

Շարունակվում է «Ուսուցանող գնահատում» բաղադրիչի ներդրման գործընթացը: Հարկ ենք համարում հիշեցնել դրա էությունը՝ նպատակ ունենալով զերծ պահել ուսուցչությանը աշակերտների ամենօրյա պատասխանները նիշով գնահատելու արատավոր պրակտիկայից:

**Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքի որակական աշխատանքն է:**

Ընթացիկ գնահատման նոր համակարգում առանձնակի շեշտադրվում է աշակերտի հետ կատարվելիք կանոնակարգված ուսուցողական աշխատանքը, որն անվանում են ուսուցանող գնահատում: Այդ աշխատանքն ունի զուտ ուսուցանող բնույթ և կիրառվում է միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածներում: Այստեղ աշակերտի ձեռքբերումները համեմատվում են կրթական պահանջների և նրա նախկին ձեռքբերումների հետ միայն



և չեն համենատվում մյուս աշակերտների ձեռքբերումների հետ: Այս դեպքում ուսուցիչը, ինչպես նաև աշակերտը, պարզում են կատարված աշխատանքում տեղ գտած թերություններն ու սխալները և նշում դրանց վերացման ուղիները: Այդ աշխատանքի հիմնական նպատակն է՝ արվածի արժևորման, հետադարձ կապով վերլուծման և քննարկումների միջոցով նպաստել աշակերտի կրթական առաջընթացին: **Հասկանալի է, որ մնան մոտեցման պարադայում աշակերտի աշխատանքի որևէ թվանշանային գնահատում չի ծառայի առաջադրված նպատակին:**

Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով:

Գնահատման այս ձևի կարևոր առանձնահատկությունը հետադարձ կապի առկայությունն է: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համենատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի, ինքնագնահատման ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

«Մայրենի» առարկայից ուսուցանող գնահատում իրականացնելու նպատակով՝ կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ տեսակներն ու ձևերը.

- Բանավոր հարցում
- Գրավոր աշխատանք
- Գործնական աշխատանք
- Տնային աշխատանք
- Խմբային կամ համագործակցային աշխատանք
- Ինքնագնահատում
- Փոխադարձ գնահատում
- Սովորողի ուսումնական թղթապանակ

Կարևորելով ուսուցչի տեղեկացված լինելու իրավունքը, ինչպես նաև մասնագիտական դաշտում առաջընթաց ապրելու, մանկավարժական նորություններով նրան զինելու ժամանակի պահանջը՝ առաջարկում ենք ակտիվացնել համագործակցությունը ԿԱԻ համացանցային կայք-էջի հետ: Ուսուցչին տրված է իր խոսքը լսելի դարձնելու, իրեն հուզող հարցերը բարձրաձայնելու, ճշգրտված



ու հստակ տեղեկությո՞ւ ստանալու լայն հնարավորություն: ԿԱԻ-ին ակնկալում է ուսուցիչների ակտիվությունն ու համագործակցությունը՝ իրեն հետաքրքրող հարցերի, լավագույն փորձի և մանկավարժական ոլորտի բազմաբնույթ խնդիրների կապակցությամբ հեռահար շփման հնարավորությունների օգտագործումը համացանցային կայքի /www. aniedu. am/ միջոցով:

Երեխայի առողջության ամրապնդման և պահպանման խնդիրներին անդրադառնալով՝ հարկ ենք համարում մատնանշել դպրոցական ռիսկի այն գործոնները /մանկավարժական սթրես, ուսումնական գործընթացի արհեստական արագացում, կրտսեր դպրոցականների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների անհամապատասխանություն ուսուցման մեթոդիկաներին ու տեխնոլոգիաներին, ուսուցման գործընթացի ոչ ճիշտ կազմակերպում, տնային հանձնարարություններով գերբեռնում և այլն/, որոնք բացասաբար են անդրադառնում երեխայի ֆիզիկական զարգացման ու առողջական վիճակի վրա: ԿԱԻ նախադպրոցական և տարրական կրթության բաժինը նոր ուսումնական տարում, նախատեսում է կազմակերպել գիտագործնական համաժողով՝ «Առողջապահական դպրոց» թեմայով: Անհրաժեշտ տեղեկատվություն կարող եք ստանալ ԿԱԻ համացանցային կայք-էջից:

**Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա**

2012-2013 ուստարում ՀՀ հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի ուսուցումն 1-ին, 2-րդ, 3-րդ դասարաններում կիրականացվի ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված նախորդ տարվա դասագրքերով՝ բացառությամբ չորրորդ դասարանի դասագրքերի: Այս տարի կշրջանառվեն դրանց 2012 թ. լրամշակված հրատարակությունները.

- 1. Վ. Հովհաննիսյան և ուր., «Մաթեմատիկա-4», Եր., «Արևիկ»,
- 2. Ս. Սկրտչյան և ուր., «Մաթեմատիկա-4», Եր., «Ձանգակ-97»:

Հայտնի է, որ «Մաթեմատիկա» առարկայի չափորոշչային և ծրագրային կարևոր պահանջներից է աշակերտների տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը զարգացնելը, նրանց գիտելիքներին գործնականություն հաղորդելը, դրանք առօրյա կյանքի, երեխայի կենսափորձի հետ կապելը:

Այս հարցերի կապակցությամբ ուսուցիչներին օժանդակելու նպատակով ստեղծվել են «Մաթեմատիկայից գործնական աշխատանքներ» (Գ. Բեդիրյան, Մ. Մանուկյան, Երևան 2012, «Աստղիկ Գրատուն») և «Հետաքրքրաշարժ առաջադրանքներ» (Ս. Սարգսյան, Երևան 2012, «Արևիկ» հրատ.) ձեռնարկները:

Ձեռնարկներում գետեղված հետաքրքրաշարժ և գործնական առաջադրանքները մաթեմատիկայի դասավանդումն առավել հետաքրքիր ու գործնական կդարձնեն:



2012-2013 ուստարում ընթացիկ գնահատման համակարգում փոփոխություններ չեն նախատեսվում՝ կապված գնահատման միավորային բաղադրիչի և դրա ենթատեսակների հետ:

Շարունակվում է ուսուցանող գնահատում բաղադրիչի ներդրման գործընթացը՝ կարևորելով այդ նպատակով ուսումնառության ընթացքում կիրառվող որակական այն աշխատանքները, որոնք նպաստում են արդյունավետ դասավանդմանն ու սովորողի կրթական առաջընթացին:

Ուսուցանող գնահատման նպատակով իրականացվում են՝

**Բանավոր հարցում.** անհատական բանավոր հարցում, անհատական քարտ-առաջադրանքներ, աշակերտներին ուղղված հարցեր, խաղային տեխնոլոգիաներ, խմբային և համագործակցային աշխատանքներ, սակայն արդյունքներն արտահայտել ոչ թե միավորներով, այլ բառային նկարագրություններով, արժևորումներով:

**Գրավոր աշխատանք.** կարելի է օգտագործել հայտորոշիչ (դիագնոստիկ) թեստեր (հարցարաններ):

**Գործնական աշխատանք.** կիրառելի են գործնական աշխատանքների նույն տեսակները, ինչ որ միավորային գնահատման դեպքում, սակայն դրանք միավորներով չեն գնահատվում. ուսուցչի կամ աշակերտների կողմից տրվում են բառային մեկնաբանություններ: Գնահատում և արժևորում է կատարված աշխատանքը, նշվում են աշխատանքում տեղ գտած թերություններն ու դրանց վերացման ուղիները:

**Տնային աշխատանք.** ուսումնառությունը խթանելու արժեքավոր միջոց է: Տնային աշխատանք հանձնարարելիս ուսուցչի խնդիրն է հաշվի առնել դրա ծավալն ու բարդության մակարդակը՝ արհեստականորեն չձանրաբեռնելով աշակերտներին: Սովորողների ծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով խորհուրդ է տրվում կիրառել տարբերակված մոտեցում:

Տնային աշխատանքներ հանձնարարվում են II –IV դասարաններում: Գրանք հաճախակի պետք է ստուգվեն՝ պարզելու համար, թե աշակերտներից յուրաքանչյուրն ինչպե՞ս է կատարում տնային հանձնարարությունները, ի՞նչ հաջողություններ ունի, ո՞ր հարցերում է դժվարանում:

Տնային աշխատանքի կատարման շուրջ կազմակերպվող քննարկումներն ու վերլուծությունները կօգնեն զարգացնելու մաթեմատիկական խոսքը, հնարավորություն կտան աշակերտին լավ յուրացնելու ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնելու նկատված թերություններն ու բացթողումները:

Վերոնշյալ տեսակներից գատ՝ ուսուցիչն ազատ է ընտրելու ուսուցանող նպատակով իրականացվող ուսումնական գործունեության այլ ձևեր ու միջոցներ՝ դրանք ըստ անհրաժեշտության կիրառելու նպատակով:

**ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ**

Արդեն չորրորդ տարին է, ինչ հանրակրթական դպրոցներում ներդրվել է նոր առարկա՝ «Ես և շրջակա աշխարհը»: Ակադեմիական գիտելիքների տեսանկյունից ներածական այս դասընթացը երեխաներին նախապատրաստում է հետագայում ավելի լուրջ գիտելիքների յուրացմանը՝ դպրոցական հումանիտար և բնագիտական առարկաներից:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի մեկ այլ կարևոր առաքելություն՝ սոցիալական հմտությունների խթանում, վարքագծի և ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորում ու դաստիարակություն:

Ինչպես այլ առարկաների, այս առարկայի համար ևս ստեղծվել են այլընտրանքային 2 դասագրքեր, որոնք գործածության մեջ կլինեն նաև այս ուսումնական տարում: Դասագրքերին կից ստեղծվել են ուսուցչին ուղղորդող ձեռնարկներ, որոնք մանրամասնում են դասի կազմակերպման գործընթացը և նպաստում ուսումնական նյութի առավել արդյունավետ մատուցմանը:

Առարկայի առանձնահատկությունները ենթադրում են նաև գնահատման նոր մոտեցումներ: Դրանք մանրամասն կարող եք ծանոթանալ [www.aniedu.am](http://www.aniedu.am) համացանցային կայքում:

2012-13 ուստարում գործածության են հաստատվել առարկայի բեռնաթափված և լրամշակված չափորոշիչներն ու ծրագրերը:

**2-րդ դասարանում** «Ես և դպրոցը» թեմայից հանվել է «Իրավունքներն ու պարտականությունները դպրոցում» հատվածը: «Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը» թեմայից հանվել է «Դերերը և փոխկախվածությունը համայնքում» հատվածը: «Քաղաք և գյուղ» թեմայից հանվել են «...երբ է հիմնադրվել», «...կարևոր ձեռնարկությունները», «Մեր մարզը, երկիրը» հատվածները՝ թեմայի ուսումնասիրման համար նախատեսելով 1 ժամ՝ 2 ժամի փոխարեն: «Բնությունն իմ շուրջը» թեմայից հանվել են «Բույսերը և մարդը», «Սեզոնային փոփոխություններ», «Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ» հատվածները: 13 ժամի փոխարեն թեմային հատկացվել է 12 ժամ:

**3-րդ դասարանում** «Ես և իմ շրջապատի մարդիկ» թեմայից հանվել է «Ինչպիսին կուզենայի տեսնել իմ համայնքը», իսկ «Ինչպես են կազմակերպում իմ կյանքը» թեմայից՝ «Հեռահար և մոտակա նպատակներ» հատվածները: «Տարվա եղանակներ» թեմայից կրճատվել են «Ամիսներ», «Անտառի, մարգագետնի, այգու, ջրային ավազանների բույսերն ու կենդանիները», «Ինչով են կենդանիները տարբերվում բույսերից» հատվածները: «Մեր առողջությունը» թեմայի ուսումնասիրման համար 11 ժամի փոխարեն նախատեսվել է 10 ժամ:

**4-րդ դասարանում** «Բնություն» թեմայից հանվել է «Քաղցրահամ ջրի պաշարները» հատվածը, իսկ «Օգտակար հանածոները, դրանց խնայողաբար օգտագործումը և պահպանումը» հատվածը տեղափոխվել է «Բնությունը և մարդը» թեմայի մեջ: «Բնություն» թեմային տրամադրվել է 12 ժամ՝ 14 ժամի փոխարեն:



«Մեր հայրենիքը» թեմայից հանվել է «Մարզական նվաճումներ. անցյալ և ներկա» հատվածը, իսկ թեմայի ուսումնասիրմանը հատկացվել է 11 ժամ՝ 12-ի փոխարեն: «Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ» թեմայից հանվել են «Տեղանքի հետազոտում, քարտեզագրում», «...ազդեցությունը եվրոպական քաղաքակրթության վրա» հատվածները, իսկ 5-րդ դասարանի բնագիտության դասընթաց է տեղափոխվել «Մասշտաբ, տեղանքի հատակագիծ, աշխարհագրական քարտեզ, գլոբուս» հատվածը: «Ես և հասարակությունը» թեմայից հանվել են «Ժողովրդավար հասարակություն», «Հավանական և նախընտրելի ապագա», «Կարծրացած ընկալումներ, տեսակետներ» հատվածները: Նախկինում թեմային հատկացված 8 ժամի փոխարեն այժմ տրվել է 7 ժամ:

Արդյունքում բոլոր դասարաններում առաջացել են պահուստային ժամեր (2-րդ դասարան՝ 3 ժամ, 3-րդ դասարան՝ 3 ժամ, 4-րդ դասարան՝ 8 ժամ), որոնք նախատեսվում են թեմատիկ, կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների, որոշ թեմաների համակարգման և գործնական աշխատանքների համար:

*Կարինե Թորոսյան  
Մարինե Մանուկյան  
Սոնա Մարգարյան  
Լուսինե Ալեքսանյան  
Նաիրա Տողանյան  
Արմեն Հովսեփյան*



## ԿԱՐԻՆԵ ՉԻԲՈՒՆՉՅԱՆ

*Ծնվել է 1965 թ. Երևանում:*

*Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ֆակուլտետը: Աշխատում է Երևանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 դպրոցում որպես դասվար և, համատեղության կարգով, Կրթության ազգային ինստիտուտում որպես տարրական կրթության մասնագետ:*

## ԴԱՍԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ

*Հոդվածը երաշխավորել է պագրոթյան ամսագրի գլխավոր խմբագիր Կ. Թորոսյանը*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացված են տարրական դասարաններում կիրառելի ոչ ստանդարտ դասերի նկարագրություններ: Դրանք ուսուցման գործընթացն առավելի հետաքրքիր և ուսանելի դարձնելու լավագույն միջոց են և միաժամանակ նպաստում են կրտսեր դպրոցականի անձի ներդաշնակ զարգացմանը: Այդպիսի դասերի ընթացքում ամրապնդվում են անցած ուսումնական նյութերը, ակտիվանում սովորողների մտածողության գործընթացները, հարստանում է բառապաշարը: Ոչ ստանդարտ դասերը ստեղծագործական հետաքրքրություն են առաջացնում և հրճվանք պատճառում թե՛ սովորողներին, թե՛ ուսուցչին:

***Դասն արեգակ է, որի շուրջը, ինչպես մոլորակներ, պտտվում են մյուս բոլոր ուսումնական պարապմունքների ձևերը:***  
**Ն. Մ. Վերգիլին**


Հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն սահմանված են հանրակրթական ծրագրի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները: Դրանք տրվում են տարբեր ուսումնական բնագավառների միջոցով, ըստ կրթական ծրագրերի աստիճանների: Չափորոշչում ամրագրված է.

«Տարրական կրթության ծրագրի «Հայոց լեզու, գրականություն» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի կողմից մայրենի լեզվի տիրապետման անհրաժեշտության ու առաջնայնության, ազգային ինքնության հաստատման ու պահպանման գործում մայրենի լեզվի դերի գիտակցմանը.

2) գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու գործում հայերենի դերի արժևորմանը.

3) մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալու, հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալու, սեփա-



կան ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու նախնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը»<sup>1</sup>:

Հիմնական դպրոցում ուսումնական բնագավառները ներկայացվում են պետական պարտադիր առարկաներով: Մասնավորապես «Հայոց լեզու, գրականություն» բնագավառը 1-6-րդ դասարաններում ներկայացվում է «Մայրենի» առարկայով: Այստեղ ուսուցումը կազմակերպվում է դաս-դասարանային համակարգով, որի կենտրոնական և որոշիչ բաղադրիչը **դասն** է:

Դասը սովորողների ուսուցման և դաստիարակության հիմնական օղակն է, որտեղ բարդ փոխկապակցվածության մեջ ներկայացված են ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակը, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերը և այլն: Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգը նպաստում է ոչ միայն առարկայական հիմնարար գիտելիքների յուրացմանը և համապիտանի կարողությունների ձևավորմանը, այլև սովորողի անձի զարգացմանը և դաստիարակությանը:

Ցանկացած դաս ունի իր ներքին կառուցվածքը, այսինքն՝ դասի առանձին փուլեր ներկայացված են իրենց հաջորդականությամբ: Վերջին ժամանակներս դասի կառուցվածքը զգալիորեն փոխվել է. բարձրացել են դրանկատմամբ պահանջները, փոխվել են ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, դերերը, ի հայտ են եկել ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևեր:

Այժմ ուսուցիչներն ավելի ազատ են դասի կառուցվածքի ընտրության հարցում: Կարևորն այն է, որ դասը նպաստի ուսուցման, դաստիարակության, սովորողների անձի, սոցիալական հմտությունների ձևավորման բարձր արդյունավետությանը:

Մայրենիի դասերի արդյունավետությունը բարձրանում է, եթե հաջողվում է դասաժամերի ընթացքում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց միջոցով հնարավոր լինի իրականացնել չափորոշչային պահանջները: Մեր կար-

<sup>1</sup> Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010, Երևան:

ծիքով՝ դրան կարելի է հասնել կազմակերպելով ոչ միայն ավանդական մանկավարժության մեջ ընդունված դասի տիպերը, ուսուցման կազմակերպման հանրահայտ ձևերը, այլև այսպես կոչված ոչ ստանդարտ դասերը:

Դիտարկենք ոչ ստանդարտ դասերից մի քանիսի անցկացման մեթոդիկան:

**Դաս-հեքիաթն** անցկացվում է արտասովոր ձևով: Ամբողջ դասասենյակը փոխակերպվում է հեքիաթային աշխարհի, իսկ երեխաները՝ հեքիաթի հերոսների:

Դասը կարելի է անցկացնել մեկ կամ մի քանի հեքիաթների բովանդակության համադրմամբ: Կարելի է ընտրել ժողովրդական կամ հեղինակային հեքիաթներ: Նման տիպի դասը հեքիաթի ոգով է կառուցված. օգտագործվում են հեքիաթային իրեր, երեխաներին օգնության են հասնում հեքիաթների հերոսները, դասի ընթացքում օգտագործվում են համապատասխան արտահայտություններ ու բառեր:

Դաս-հեքիաթի կազմակերպումը հնարավոր է նաև հեքիաթների թեմատիկ խումբն ուսումնասիրելուց հետո: Դասի թեմա կարելի է դարձնել՝ «Հեքիաթային հերոսներ-կենդանիներ» թեմատիկ խումբը:

**Դասի ընթացքը**

Ամբողջ դասարանը բաժանվում է երեք խմբի: Առաջին խումբը ներկայացնում է աշխարհի ժողովուրդների հեքիաթների աղվեսներին: Երկրորդ խումբը ներայացնում է արջերին, երրորդը՝ նապաստակներին: Յուրաքանչյուր աշակերտ ինքը կարող է որոշել, թե որ խմբի անդամ կցանկանա լինել: Երեխաները նախապատրաստվում են այս դասին: Նրանք ընտրում են հեքիաթը, իրենց հերոսներին, պատրաստում են փոքրիկ դերային խաղեր այդ հեքիաթից: Խմբերն ընտրում են որևէ խորհրդանիշ, համապատասխան անվանում, նշանաբան և այլն:

Դասը կարելի է սկսել հեքիաթների գրքերի ցուցահանդեսի կազմակերպումից և դիտումից: Կարելի է անցկացնել մրցույթ՝ «Կռահիր հեքիաթը» անվանումով: Ուսուցիչը ընթերցում է հատվածներ հեքիաթներից, իսկ երեխաներն անվանում են հեքիաթը և ցուցահանդեսում ցույց տալիս այն գիրքը, որտեղ զետեղված է տվյալ հեքիաթը: Կամ յուրաքանչյուր խումբ դերային խաղով ներկայացնում է որևէ հեքիաթ, իսկ մյուս խմբերը պետք է կռահեն հեքիաթի վերնագիրը:

Չնայած այն հանգամանքին, որ դաս-հեքիաթը պահանջում է բավականին մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք, այնուամենայնիվ, դրանք միշտ բավականություն են պատճառում և՛ աշակերտներին, և՛ ուսուցչին:



**Դաս-ցերեկույթ:** Կարելի է անցկացնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում 1-2 անգամ: Դաս-ցերեկույթը կարելի է կազմակերպել հետևյալ թեմաներով՝ «Հեքիաթների աշխարհում», «Մեզ հասակակից գրական հերոսները», «Ամտառային թագավորությունում» և այլն: Այսպիսի դասերին կարելի է նաև հյուրեր հրավիրել: Դասի տևողությունը մեկ դասաժամ է: Սակայն ինչպես դաս-հեքիաթի դեպքում այստեղ նույնպես ենթադրվում է բավականին մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք: Դաս-ցերեկույթը նախապատրաստում են հենց իրենք՝ աշակերտները: Բովանդակությունը կազմվում է այն նյութերից, որոնք ուսումնասիրել են մայրենիի դասաժամերին (թե՛ ընթերցանության, թե՛ խոսքի և հաղորդակցման, թե՛ ինքնուրույն ընթերցանության դասերի ընթացքում), և որոնք էլ հատկապես դուր են եկել աշակերտներին:

Երեխաները նախապես նկարագարողում են ստեղծագործությունները, ընտրում գրքեր, պատրաստում ինքնաշեն գրքեր, կերպարվեստի և տեխնոլոգիայի դասերին կատարում են ստեղծագործական աշխատանք՝ դաս-ցերեկույթում ընդգրկված նյութերի թեմաներով: Նրանք վերհիշում են թեմային համապատասխան հանելուկներ, հաշվելուկներ, շուտասելուկներ, քանաստեղծություններ, ինչպես նաև հանդես են գալիս դերային խաղով:

Կարելի է կազմակերպել գրքերի շքահանդես: Երեխաներն ընտրում են գիրքը, պատրաստում հաղորդում դրա վերաբերյալ. ինչո՞ւ է այդպես վերնագրված, ո՞վ է հեղինակը, ովքե՞ր են հերոսները և այլն:

Հետաքրքիր է անցնում «Լավագույն ընթերցող» մրցույթը: Ուսուցիչը ցույց է տալիս որևէ գրքից նկարագարող դրվագ, իսկ աշակերտները կռահում են գրքի վերնագիրը, ստեղծագործության վերնագիրը, թվարկում հերոսներին և այլն:

Դաս-ցերեկույթի ընթացքում կարելի է անցկացնել տրված թեմայով կամ ժանրով գրքերի ճիշտ ընտրության մրցույթ: Դասարանը բաժանվում է խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվում է գրքերի հավաքածու (10-12 անուն), որոնցից խումբը պետք է առանձնացնի տրված թեմայով գրքերը: Օրինակ՝ առաջին խումբն ընտրում է պատմվածքներ երեխաների մասին, երկրորդ խումբը՝ քանաստեղծություններ բնության մասին, երրորդը՝ հեքիաթներ կենդանիների մասին:



**Ստեղծագործական դասերը** ձևավորում և զարգացնում են ստեղծագործական կարողություններ: Այս տիպի դասերի միջոցով կազմավորվում է կերպարային ընկալում, որը շատ կարևոր է գեղարվեստական մտածողության զարգացման տեսակետից: Հատկապես մեծ մտածելակերպն է օգնում ընկալելու գեղարվեստական ստեղծագործության գաղափարը, ենթատեքստը:



տը, բովանդակությունը, իրադարձությունների հաջորդականությունը և այլն:

Այս դասերի ընթացքում հարկավոր է հատկապես հաշվի առնել և բացահայտել անձի անհատական առանձնահատկությունները:

Բերենք օրինակ: Կարելի է անցկացնել ստեղծագործական դաս՝ «Հեքիաթային ճանապարհ» թեմայով: Այն կազմակերպվում է հետևյալ հաջորդականությամբ. երեխաները բաժանվում են խմբերի: Խմբերին տրամադրվում են թուղթ, մատիտներ, թանաքամատիտներ: Խմբերը գծապատկերում են ճանապարհ և նկարում դրվագներ՝ տարբեր հեքիաթներից:

**Դաս-ճանապարհորդություն:** Վառ հուզական խաղային ձև է, որը երեխաներին հրապուրում է հենց դասի սկզբից, և մինչև դասի վերջ չի շեղվում նրանց ուշադրությունը: Ճանապարհորդել կարելի է մեկ գրքի էջերով, նույն հեղինակի տարբեր գրքերի էջերով, այն ժամանակաշրջանով, որի ընթացքում ապրել են տվյալ ստեղծագործության հեղինակը կամ հերոսները, շրջել հեքիաթում պատկերված երկրներով և այլն:

Դաս-ճանապարհորդությունը մյուս ոչ ստանդարտ դասերից տարբերվում է քարտեզի առկայությամբ. նշվում են կայարանները, կանգառները, որտեղ ընտրված երթուղուն համապատասխան պետք է հայտնվեն մասնակիցները: Ճանապարհորդության համար որոշվում է փոխադրամիջոցը՝ ինքնաթիռ, ավտոբուս, հեծանիվ, ավտոմեքենա, աստղանավ, ժամանակի մեքենա, թռչող գորգ և այլն: Ճանապարհորդությունը կարող է իր մեջ ներառել պարեր, երգեր, դերային խաղեր:

**Դաս-հետազոտությունը** կարելի է կազմակերպել առակների, ժողովրդական և հեղինակային հեքիաթների ուսումնասիրման ընթացքում՝ ձևավորելով գրականագիտական հասկացությունների ընկալման և ստեղծագործությունների կառուցվածքային տարրերի, բովանդակության և ժանրերի համեմատման կարողություններ: Դաս-հետազոտության ընթացքում պետք է ուսուցանել, վերլուծել դասանյութը, առանձնացնել գլխավորը, համեմատել փաստերը և իրադարձությունները, ընդհանրացնել և համակարգել գիտելիքները, ապացուցել դատողությունների հավաստիությունը կամ ժխտել դրանք, բացատրել գրականագիտական հասկացությունները:

Այսպես, ուսումնասիրելով թեմատիկ խմբի նյութերը, վերջում անցկացվում է դաս-հետազոտություն. աշակերտները համեմատում են թեմատիկ խմբում ընդգրկված ստեղծագործությունները՝ ձևավորելով որոնողական-ստեղծագործական հետազոտություններ կատարելու կարողություններ:





Անշուշտ, կան ոչ ստանդարտ դասերի այլ տեսակներ ևս: Սակայն սույն հոդվածի շրջանակում գերադասեցինք նկարագրել վերը նշված դասերի անցկացման մեթոդիկան: Ոչ ստանդարտ դասերի նկարագրությունից կարելի է ենթադրել, որ տվյալ դասերը նպաստում են չափորոշչային պահանջների իրականացմանը, ոչ ստանդարտ դասերի ընթացքում փոխվում են ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, երեխաները հաճույքով են մասնակցում դասերին:

Պետք է ավելացնել նաև, որ ոչ ստանդարտ դասերն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ ուսուցիչը ճշգրտորեն որոշում է դրանց տեղն ուսումնական գործընթացում և բժախնդրորեն ընտրում այն ուսումնական նյութը, որի ուսումնասիրումը, ամրակայումը, համակարգումը, ստուգումն ու գնահատումը կարելի է կազմակերպել նման դասերի ընթացքում:



### **Օգտագործված գրականություն**

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010, Երևան:
2. Подласый И.П. Педагогика: Новый курс: Учеб. для студ. высш. учеб. заведений: в 2 книгах. – М.: Гуманит. Изд. Центр Владос, 2002.

## **РЕЗЮМЕ**

### **Урок как основной вид организации процесса обучения**

**Карине Чибухчян**

В статье предлагаются разработки нестандартных уроков в начальной школе. Нестандартные уроки помогают сделать процесс обучения интересным, увлекательным, Они также способствуют гармоничному развитию личности младшего школьника. На таких уроках закрепляется пройденный материал, активизируется мыслительная деятельность учащихся, обогащается их словарный запас.

Нестандартные уроки - это уроки, которые несут радость и детям, и учителям.

*Ներկայացված է տպագրության՝ 01. 06. 2012 թ.:*

ԱՐՄԱՆՈՒՑ ԱՐԱՄՅԱՆ

Ծնվել է 1970թ. Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղում: Ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետի դպրոցական բաժինը: 1990-2008թթ. աշխատել է գյուղի դպրոցում որպես դասվար, 2006-ից՝ փոխտնօրեն: 2008 թվականից ԿԱԻ Լոռու մարզի մասնաճյուղի տարրական կրթության մասնագետն է: Հեղինակ է գիտամեթոդական հոդվածների:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածը երաշխավորել է տպագրության խմբագրական խորհրդի անդամ Ա. Ալավերդյանը

**Համառոտագիր:** Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն սովորողների կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլև նրանց բազմակողմանի զարգացումը, գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության «օվկիանոսում» կողմնորոշվելու կարողության ձևավորումը: Մտածողության գործընթացը ենթադրում է ինչպես նորի որոնում, այնպես էլ արդեն ձեռք բերած գիտելիքների օգտա-

գործում: Սովորողների հետազոտական գործունեության հաջողությունը հիմնականում պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորմամբ: Ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում է հետազոտական աշխատանքի կազմակերպչի, օգնականի և ուղղորդողի:



ոցիալական կյանքի շարժընթացը պահանջում է նախաձեռնելու, ժամանակի մեջ և իրադրային պայմաններում արագ կողմնորոշվելու, գործունեություն պլանավորելու, անհրաժեշտ տեղեկատվությունն իր համար վերաիմաստավորելու և մշակելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, որոշումներ կայացնելու, գիտելիքների ձեռքբերման ուղուն անդրադարձ կատարելու, կշռադատելու, կատարված աշխատանքը ներկայացնելու, գնահատելու հմտություններ և կարողություններ: Այս բոլոր խնդիրները պետք է լուծվեն ուսումնառության ընթացքում: Այդ նպատակով հարկավոր է ուսուցումը կազմակերպել այնպես, որ ճանաչողական գործընթացն իրականանա հիմնականում ինքնուրույն կերպով, այսինքն՝ կիրառել անձնակողմնորոշիչ կրթական տեխնոլոգիաներ:

Հոգեբանների վերլուծությունները ցույց են տալիս, որ մտածելու հիմնական գործառույթը անհայտի և նորի բացահայտումն է: Այն ավելի արտահայտված է դրսևորվում, երբ մարդն առաջադրում և լուծում է կենսականորեն անհրաժեշտ զանազան խնդիրներ: Մտածողության գործընթացը ենթադրում է ոչ միայն նորի որոնում, այլև արդեն ձեռք բերած գիտելիքների օգտագործում: Հետևաբար ուսուցման ժամանակ սովորողների ինքնուրույն որոնումների կազմակերպումն ստեղծում է նպաս-



տավոր պայմաններ՝ նոր գիտելիքների յուրացման և մտածողության զարգացման համար: Մտավոր գործունեության զարգացման հիմքում հետազոտական աշխատանքն է: Դրա ակտիվ մասնակիցը պետք է դառնա սովորողը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա օժտված լինի ստեղծագործական, հետազոտական հմտություններով: Այդպիսի հատկությունները ձևավորվում և զարգանում են համապատասխան աշխատանքներ կատարելու ընթացքում:

Հետազոտական գործունեությունը գործողությունների և քայլերի հանրագումար է, որը հնարավորություն է տալիս իրագործելու կոնկրետ նպատակ, լուծելու խնդիր, և արդյունքում այն վերածվում է տեսանելի նյութի: Կիրառվում է որպես ստեղծագործական մտածողություն զարգացնող և ուսուցման դրդապատճառներ առաջացնող միջոց: Հետազոտական գործունեության ընթացքում սովորողներն ընտելանում են՝

- ինքնուրույն հասնել արդյունքի,

- կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրները և դրանց լուծման ուղիները,

- կյարողանան օգտագործել տեղեկատվական աղբյուրներ,

- գնահատել իրենց և ընկերների աշխատանքի արդյունքները,

- կձևավորեն տեղեկատվություն որոնելու և ընտրելու հմտություններ, սեփական գործունեության պլանավորման, գործողությունների քայլաշարը մշակելու և վերլուծելու, ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու հմտություններ:

Սեփական հետազոտության և փորձերի արդյունքներով նոր գիտելիք յուրացնելը երեխայի համար ավելի հեշտ է, քան ինչ-որ մեկի հայտնագործած գիտելիքները վերցնելը: Հետազոտությունների նկատմամբ հակումը հատուկ է բոլոր երեխաներին, սակայն այն առավել բնորոշ է օժտվածներին: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու, ճշմարտությունն ինքնուրույն որոնելու մշտական ձգտումը դիտարկվում են որպես մանկան օժտվածության ցուցիչներ: Երեխան իր բնույթով հետազոտող է: Հետազոտական ունակությունները նրա մեջ դրսևորվում են դեռևս վաղ տարիքից: Մակայն երբեմն թերազնահատում ենք մանկական հետազոտությունները և այդ կերպ ինքներս նվազեցնում երեխաների հետազոտական ակտիվությունը: Օրինակ՝ վրդովվում ենք այն բանից, որ հետազոտական աշխատանքի արդյունքը քանդած խաղալիքն է լինում, կամ երեխաների որոնողական ակտիվությունից տուժում են կենցաղային սարքերը, գրքերը և կահույքը: Երեխայի համար բնական վիճակ է, որ թողթը պատռի և նայի, թե ինչ է ստացվել, պատուհանից հետևի կենդանիների վարքին, տարբեր առարկաներով փորձեր անի, քանդի խաղալիքները՝ դրանց կազմությունը պարզելու համար: Մեզնից շատերը դա

երեսառաժուրթյուն, չարաճճիություն են համարում և չեն հասկանում, որ ապագա հետազոտողը ծնվում է հենց այդ տարիքում:

Երեխաները երագում են այնպիսի դպրոցի մասին, որտեղ սովորելը հետաքրքիր է և հաճելի: Դրա համար էլ ուսումնական գործընթացը պետք է ենթադրի խնդրահարույց իրավիճակներ, որոնց լուծմանն աշակերտները կհանգեն ինքնուրույն՝ իրենց համար մատչելի հետազոտական աշխատանքի շնորհիվ: Երեխայի ինքնուրույնության աստիճանին համապատասխան առանձնացվում են հետազոտական աշխատանքի իրագործման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակում ուսուցիչն է առաջադրում խնդիրը, ինքն էլ ուղենշում դրա լուծման ռազմավարությունը: Այս դեպքում երեխային մնում է ինքնուրույն գտնել լուծումը: Երկրորդ մակարդակում ուսուցիչն է ձևակերպում խնդիրը, սակայն դրա լուծման մեթոդը երեխան որոնում է ինքնուրույն: Երրորդ մակարդակում երեխան ինքնուրույն առաջադրում է խնդիր, որոնում և մշակում դրա հետազոտության մեթոդները:



Հետազոտական գործունեությունը ներառում է հետևյալ հիմնական փուլերը.

- *Խնդրի առանձնացում և առաջադրում*
- *Թեմայի ընտրություն*
- *Վարկածների առաջադրում*
- *Լուծման հնարավոր տարբերակների փնտրում և առաջարկում*
- *Նյութերի հավաքագրում*
- *Ստացված տվյալների ընդհանրացում*
- *Նախագծի նախապատրաստում/հայտարարություն, զեկուցում, մակետ և այլն/*
- *Նախագծի պաշտպանություն*



Զննարկենք այդ փուլերից յուրաքանչյուրը:

**Ինչպես ընտրել հետազոտության թեմա:** Երեխաների հետազոտական աշխատանքի համար նախատեսվող թեմաները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

**-երևակայական.** գոյություն չունեցող, ֆանտաստիկ առարկաների ու երևույթների մշակմանն ուղղված թեմաներ.

**-էմպիրիկ.** սեփական դիտարկումների ու փորձերի անցկացում ենթադրող թեմաներ.



**-տեսական.** այս խումբն ուղղված է տարբեր աղբյուրներում պարունակող փաստերի, նյութերի ուսումնասիրությանն ու ընդհանրացմանը նվիրված թեմաներ:

Թեման պիտի լինի այնքան հետաքրքիր, որ խանդավառի երեխային: Հետագոտական գործունեությունն արդյունավետ կարող է լինել միայն կամավորության սկզբունքի պահպանմամբ: Ինչ-որ բան հետազոտելու ցանկություն առաջանում է այն ժամանակ, երբ առարկան գրավիչ է և զարմացնող: Երեխային հետաքրքրող թեմա ընտրելու համար հարկավոր է ճշգրտել նրա հակումները:

Խնդիրը պետք է լինի կատարելի, իսկ դրա լուծումը հետազոտության մասնակիցներին իրական օգուտ բերի: Անհրաժեշտ է, որ թեման ներառի անսպասելիության, անսովորության տարրեր: Իմացությունը զարմանքից է սկսվում, իսկ մարդը զարմանում է անսովոր բաներից: Այս դեպքում ինքնատիպությունն ընկալվում է ոչ միայն որպես ինչ-որ անսովոր բան գտնելու, այլև սովորական իրերին ու երևույթներին ոչ ստանդարտ մոտեցում ցուցաբերելու ունակություն:

Թեման պետք է թելադրի նաև աշխատանքը հնարավորինս արագ կատարելու պահանջ: Բանն այն է, որ կրտսեր դպրոցականի՝ ինչ-որ խնդրի վրա տևականորեն ուշադրությունը կենտրոնացնելու, նույն հարցի շուրջ երկար մտորելու հնարավորությունը սահմանափակ է: Հաճախ է պատահում, որ ոգևորությամբ սկսված և միանգամից ավարտին չհասցված աշխատանքն այդպես էլ անավարտ է մնում: Հետազոտության թեման ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

-Խնդիրը պետք է համապատասխանի երեխաների տարիքային առանձնահատկություններին: Այս դիրքորոշումը սովորաբար ոչ այնքան խնդրի ընտրությանն է վերաբերում, որքան դրա ներկայացման մակարդակին: Նույն խնդիրը տարբեր տարիքի երեխաների կողմից և ուսումնառության տարբեր փուլերում տարբեր կերպ և խորության տարբեր աստիճաններով կարող է լուծվել.

-Խնդիր ընտրելիս պետք է հաշվի առնել՝ կա՞ն արդյոք դրա լուծման համար անհրաժեշտ միջոցներ ու նյութեր: Գրականության, անհրաժեշտ հետազոտական հիմքի բացակայությունը, անհրաժեշտ տվյալներ հավաքելու անհնարինությունը սովորաբար մակերեսային լուծման են հանգեցնում:



**Վարկածների առաջաշում:** Վարկածների, ենթադրությունների և անսովոր գաղափարների առաջադրումը ձևավորում է մտածական կարևոր հմտություններ, որոնք ցանկացած ոլորտում ապահովում են առաջընթաց: Վարկածի առաջաշումը պահանջում է նախագծի մշակման ընթացքում կիրառվող հետազոտական մեթոդներ և միջոցներ, որոնք օգնում են իրա-

գործել նպատակին: Վարկածները հայտնվում են որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակներ, որոնք ստուգվում են հետազոտությունների միջոցով: Վարկածի կառուցումը ստեղծագործական մտածողության գործընթացի հիմքն է: Վարկածները թույլ են տալիս բացահայտել նոր հնարավորություններ, գտնել խնդրի լուծման նոր տարբերակներ և փորձերի միջոցով պարզել դրանց արժանահավատությունը:



**Լուծման հնարավոր տարբերակների որոնում և առաջադրում:**

Հետազոտական աշխատանքը հիմնավոր գործ է, այն չի հանդուրժում շտապողականություն ու իրարանցում: Որոնման ծրագիր մշակելիս պետք է երեխաներին սովորեցնել խորանալ խնդրի մեջ՝ նրանց հետաքրքիր, անսովոր գաղափարներ առաջադրելու, դրանք մշակելու կարողություն ձևավորելու միջոցով: Պետք է օգնել երեխաներին՝ գտնելու նպատակին հասնելու բոլոր ճանապարհները, առանձնացնելու համընդհանուր ընդունելի, հանրաճանաչ և ոչ ստանդարտ եղանակներ, հստակ որակավորել դրանք, այնուհետև գնահատելով յուրաքանչյուր եղանակի արդյունավետությունը՝ ընտրություն կատարել:



**Նյութի հավաքում:**

Սեփական հետազոտությունն անցկացնելու պահանջմունքն առաջացնում է նոր տեղեկատվության աղբյուրների որոնում: Դա հիմք է ստեղծում, որ երեխային նրա սեփական հետազոտական, ճանաչողական պահանջմունքների հիման վրա ոգևորենք տարբեր աղբյուրների հետ աշխատանքով: Թե՛ տանը, թե՛ դպրոցում կարելի է առանձնացնել անկյուն, որը կարող է ծառայել որպես գրադարան և լաբորատորիա, որոնցում կկուտակվեն հետազոտական աշխատանքին անհրաժեշտ նյութեր: Այնտեղ, բացի գրքերից և մանկական տեղեկատվական գրակա-նությունից, կարող են պահվել նաև կենդանիների, բույսերի կյանքին վերաբերող տեսաժապավեններ, չափման գործիքներ, արժեքավեր իրեր, սարքավորումներ, ավարտուն հետազոտական աշխատանքներ և այլն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գրքով, տեսաֆիլմով, տեղեկատվության աղբյուրներով ձեռքբերվող տեղեկությունները մատուցվում են ինչ-որ մեկի կողմից: Իսկական հետազոտության գլխավոր իմաստը գիտելիքի ինքնուրույն ձեռքբերումն է: Ուստի տեղեկատվության առավել արժեքավոր աղբյուր է բնությունը՝ իր ամենատարբեր դրսևորումներով:



**Ստացված տվյալների ընդհանրացում:**

Հետազոտության թեման ընտրելն ու նյութ հավաքելը հաճելի, իսկ ստացված տվյալների ընդհանրացումը դժվար զբաղմունք է: Անհրաժեշտ է ստացվածը վերլուծել, նյութն



ընդհանրացնել, գլխավորն առանձնացնել, երկրորդականը բացառել: Այս խնդիրը պարզեցնում է նախնական որոշումն այն մասին, թե հետազոտության արդյունքներն ինչպես են ներկայացվելու, ինչ տեսքով են իրականացվելու: Հետազոտական աշխատանքի արդյունքը կարող է լինել գեկուցում, հաշվետվություն, գրքույկ, տեսաֆիլմ և այլն:



**Նախագծի նախապատրաստում:** Տարբեր են նաև հետազոտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևերը՝ բեմականացում, դերային խաղ, բաց դաս, մակետ և այլն: Լավ կլինի արդյունքների ներկայացման հետ մեկտեղ ներկայացնել նաև աշխատանքի ամբողջ ընթացքը, գիտելիքների և հմտությունների ձեռքբերման շարժընթացը:



**Նախագծի պաշտպանություն:** Պաշտպանությունը հետազոտական աշխատանքի պսակն է և հետազոտողի ուսումնառության կարևորագույն փուլերից մեկը: Պաշտպանության ժամանակ երեխան սովորում է պատմել յուրացրած տեղեկատվությունը, հանդիպում խնդրի վերաբերյալ այլ հայացքների, սովորում ապացուցել իր տեսակետը, պատասխանել առաջադրվող հարցերին:



**Արդյունքը:** Աշխատանքի բոլոր փուլերում պետք է նկատի ունենալ, որ մեր ակնկալած արդյունքներից գլխավորը ստեղծագործական կարողությունների զարգացումն է, երեխայի կողմից նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Այլ կերպ՝ գործ ունենք երկու արդյունքի հետ: Առաջինն այն է, ինչ երեխան ստեղծում է սեփական գլխով ու ձեռքով՝ մակետը, նախագիծը, հաշվետվությունը և այլն: Երկրորդը կարելի է համարել մանկավարժական, այսինքն՝ ինքնուրույն, ստեղծագործական, հետազոտական աշխատանքի դաստիարակչական առումով անգնահատելի փորձ, նոր գիտելիքների ու կարողությունների ձեռքբերում:

Գնահատման մեթոդի և ձևի ընտրությունն առանձնահատուկ դեր ունի հետազոտական աշխատանքը գնահատելու առումով: Անհրաժեշտ է, որ գնահատման չափանիշները լինեն թափանցիկ, բացատրելի: Աշակերտներն ի սկզբանե պետք է ծանոթ լինեն այդ չափանիշներին, իսկ ավելի լավ կլինի դրանք մշակել աշակերտների անմիջական մասնակցությամբ: Գնահատման տարբեր չափանիշներ են պահանջվում՝ յուրաքանչյուր աշակերտի, աշխատանքային խմբի և արդյունքների ներկայացման համար:



Սովորողների հետազոտական գործունեություն իրականացնելիս ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերաժվում է հետազոտական աշխատանքի կազմակերպչի, օգնականի և ուղղորդողի: Նրա պարտականությունն է՝ օգնել աշակերտներին հաղթահարելու տեխնիկական դժվարությունները, վերահսկել կատարվող աշխատանքների ուղղությունը, ապահովել աշխատանքային խմբերի կապը նաև արտաքին աշխարհի հետ՝ դպրոցի տնօրինություն, ծնողներ, համայնք, հասարակական կազմակերպություններ և այլն:

Այսպիսով՝ հետազոտական գործունեությունը նպաստում է անձի ինքնագարգացմանը, համապատասխան կարողություններով և ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության հնարներին տիրապետող և համագործակցելու պատրաստ սովորողների մի նոր տեսակի ձևավորմանը:



**Самостоятельная исследовательская деятельность  
младшего школьника**

**Армануш Арамян**

На современном этапе проблема школы – это не только обеспечение высокого уровня образования учащихся, но и их всестороннее развитие, формирование умения самостоятельно восполнять знания, умения ориентироваться в современном информационном “океане”. Процесс мышления подразумевает как поиск новых, так и использование уже приобретенных знаний. Успешность исследовательской деятельности учащихся в основном обусловлена осмысленным планированием работы учителя. Учитель из категории обычного информатора готовых знаний переходит в категорию организатора, помощника и координатора исследовательской работы.

*Ներկայացված է Խաղաղության՝ 12. 05. 2012 թ.:*



### ԱՆԱՀԻՏ ԱՐՇԱԿՅԱՆ

*Ծնվել է Երևանում:*

*Ավարտել է Վ.Բրյուսովի անվ. ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ֆրանս-գերմանական ֆակուլտետի ֆրանսիական բաժինը: 1997 թվականից աշխատում է Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում՝ որպես մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ: 2003թ. ավարտել է նույն համալսարանի ասպիրանտուրան «Լեզուների դասավանդման մեթոդիկա» մասնագիտությամբ: 2008թ. ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2009թ. դոցենտի գիտական կոչում: Զբաղվում է դպրոցում ֆրանսերենի հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման ուղղությամբ ուսուցման մեթոդիկայի, օտար լեզուների չափորոշիչների մշակման հարցերով: Ունի հրատարակված հոդվածներ, թեզիսներ և մեթոդական ձեռնարկ:*

## ԽՈՍՔԱՅԻՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ԵՎ ՈՒՊՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

*Հոդվածը երաշխավորել է տպագրության ԿԱԻ մասնագետ Զ. Ավետիսյանը*

**Համառոտագիր:** Տարրական դպրոցում օտար լեզուների ուսուցումն ունի իր առանձնահատկությունները: Այս փուլում օտար լեզվի տարբեր կողմերի (հնչյունաբանություն, քերականություն, բառապաշար) ուսուցումը և հաղորդակցության զարգացումն ընթանում են գրեթե միաժամանակ: Լեզվական նյութի ընտրությունն ու ուսուցումն իրականացվում են հաղորդակցական նպատակներով: Այդ տեսանկյունից խոսքային նմուշները կամ տիպային արտահայտությունները չափազանց կարևորվում են, քանզի դրանք կազմում են մեկ ամբողջություն՝ թե՛ բառապաշարը, թե՛ քերականությունը և թե՛ հնչյունաբանությունը դիտվում են որպես հիմնական օղակ լեզվական նյութի և հաղորդակցության միջև:

Համաձայն գործող «Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի» (Երեվան, 2010)՝ Հայաստանում օտար լեզուների ուսուցումն սկսվում է տարրական դպրոցի

երկրորդ (ռուսերեն) և երրորդ (ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն) դասարաններից, շարունակվում է միջին դպրոցի բոլոր դասարաններում և ավարտվում ավագ դպրոցի 12-րդ դասարանում («Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ», 2004, էջ 67, 69): Նշենք, որ երրորդ լեզվի դասավանդումը, դպրոցի ընտրությամբ, սկսվում է 5-րդ դասարանից/Ուսումնական պլան, էջ 27/:

Տարրական դպրոցում օտար լեզուների ուսուցումն ունի իր առանձնահատկությունները: Այս փուլում լեզվի տարբեր կողմերի (հնչյունաբանություն, քերականություն, բառապաշար) ուսուցումը և հաղորդակցության զարգացումն ընթանում են գրեթե միաժամանակ: Լեզվական նյութի ընտրությունն ու ուսուցումը պայմանավորված են հաղորդակցական նպատակով: Հաղորդակցությունը կառուցվում է ոչ միայն գիտելիքների, այլև խոսքային կարողությունների և իրազեկությունների (competence) հիման վրա:

Այս գաղափարն է առաջ քաշվում Եվրախորհրդի կողմից մշակված «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում»(2005), (Cadre europeen commun de reference....., 2001, pp.17-18) հիմնարար փաստաթղթում: Լեզուների դասավանդման ոլորտում եվրոպական քաղաքականությանը վերաբերող նյութերում (Apprendre les langues pour une nouvelle Europe, 1997, Common European Framework of Reference..., 2001, La communication dans la classe de langue, 1996), մասնավորապես՝ «Համաեվրոպական համակարգում», հատուկ ուշադրության են արժանացել ուսուցման հաղորդակցական ուղղվածությունը և հաղորդակցական իրազեկությունների զարգացման խնդիրները: Այստեղ մանրամասն շարադրված են օտար լեզուների դասավանդմանը ներկայացվող պահանջները, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև դրանց իրականացման ռազմավարությունները: Այդ փաստաթղթերի հիմնական գաղափարն է՝ առաջարկել անհատի ընդհանուր և լեզվական-հաղորդակցական իրազեկությունների տեսակները և լեզվի իմացության մակարդակները: Վերոնշյալ փաստաթղթերում լեզվի իմացության/իրազեկության (competence communicative) տիրապետման վեց մակարդակ է ներկայացված՝ ամենացածրից (A1) մինչև ամենաբարձրը (C2) խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակի՝ ունկնդրելու, ընթերցելու, խոսելու և գրելու համար:

Եվ ելնելով այս նկատառումներից՝ հենց տարրական դպրոցի 3-րդ դասարանից պետք է ստեղծել այնպիսի միջավայր ու պայմաններ, որոնք երեխաների մեջ խթանեն շփվելու, մտքեր փոխանակելու ցանկությունը, նպաստեն նրանց անկաշկանդ խոսքի կայացմանը: Մեր նպատակը տարրական դասարաններում քերականությունը խորությամբ ներկայացնելը չէ /ցավոք, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա հաճախ է հանդիպում մեր դպրոցներում/, այլ այս կամ այն քերականական երևույթը խոսքային իրադրություններում գործածելը: Եվ եթե անգամ սովորողները հաճախ իրենց խոսքի մեջ թույլ են տալիս որոշ քերականական կամ արտասանական սխալներ, հոգ չէ, քանզի ըստ նվազեցման (մինիմիզացիայի) և մոտավորեցման (ապրոքսիմացիայի) սկզբունքների (Աստվածատրյան Մ.Գ. 1985, էջ 41), թույլատրելի են երեխայի հաղորդակցությանը չխոչընդոտող որոշ սխալներ: Իհարկե, անհրաժեշտ է այդ սխալներն ուղղել, ներկայացնել ճիշտ տարբերակները: Սակայն դա պետք է արվի ոչ ամեն բուպե՝ կտրելով խոսողի մտքի թելը, այլ այնպիսի հարմար պահի, երբ վերջինս ավարտել է իր միտքը և կարող է լսել ուսուցչի կամ ընկերների դիտողությունները՝ միաժամանակ չկորցնելով վստահությունը սեփական հնարավորությունների ու կարողությունների վերաբերյալ, և չփիստվել:



Այդ տեսանկյունից խոսքային նմուշները կամ տիպային արտահայտությունները չափազանց կարևորվում են, քանզի դրանք կազմում են մեկ ամբողջություն, այսինքն՝ թե՛ բառապաշարը, թե՛ քերականությունը և թե՛ հնչյունաբանությունը դիտվում են որպես հիմնական օղակ լեզվական նյութի և հաղորդակցության միջև:

Ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումն իրականացվում է բազմալեզու ուսումնական միջավայրում (գուգահեռաբար ուսուցանվում են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն), ինչը յուրահատուկ դժվարություններ է հարուցում՝ պայմանավորված այդ երեք լեզուների փոխազդեցությամբ: Այդ պայմաններում տեղի է ունենում լեզուների՝ թե՛ դրական (transposition), թե՛ բացասական (interference) ներթափանցում: Վերջինիս հարուցած դժվարությունների հաղթահարմանը և ձեռք բերված դրական լեզվական փորձի փոխանցմանը նպաստում են լեզվական երևույթների գործածությունը իրական իրադրություններում՝ հաշվի առնելով սովորողների լեզվական փորձը, հետաքրքրություններն ու պահանջ-մունքները:

Պետք է նկատել, որ սովորողների բանավոր խոսքում հանդիպող տիպական սխալները հիմնականում պայմանավորված են թե՛ մայրենի, թե՛ առաջին օտար լեզվի ազդեցությամբ: Ուստի օտար լեզվի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար խիստ կարևոր է սխալների տիպականացումը, հատկապես՝ քերականական և բառապաշարային մակարդակներում:

Եվ այսպես, բանավոր խոսքի զարգացումը կատարվում է *խոսքային նմուշների* միջոցով: Խոսքային նմուշն այն *նվազագույն, բայց ամբողջական միավորն է, որը ներառում է և՛ քերականություն, և՛ բառապաշար, և՛ հնչերանգ, ինչպես նաև արտահայտում է ամփոփ միտք* (Бим И.Л., 2005, с. 2-6):

Դժվար է գերազնահատել այդ նմուշների կիրառումը տարրական դասարանների դասագրքերում՝ նկատի ունենալով դրանց դերը հաղորդակցական գործունեության մեջ: Դասագրքերում ընդգրկված են մի շարք երկխոսական ռեպլիկներ՝ տարբեր խոսքային մտադրություններ (intention) արտահայտելու նպատակով, ինչպես, օրինակ, ողջույն, հրաժեշտ, հաստատում, հարցում, հիացմունք, համաձայնություն, անհամաձայնություն, շնորհակալություն, գոհունակություն, հաջողության մաղթանք և այլն: Սակայն պետք է նկատել, որ դրանցում տեղ չեն գտել այդ ռեպլիկների գործածության ոլորտները, այսինքն՝ կոնկրետ իրադրությունները, ինչպես նաև համապատասխան առաջադրանքներ՝ այդ ռեպլիկները խոսքային իրադրություններում կիրառելու համար: Ցանկալի է, որ ուսուցիչն ապահովի տվյալ իրադրության մեջ այս կամ այն թեմայի հիման վրա աշակերտների կողմից խոսքային նմուշների օգտագործումն ու վարժանքը: Խոսքային նմուշը կարևոր լեզվական միավոր է, որը հիմք է ծա-

ռայում նմանատիպ այլ նմուշներ կազմելու համար: Ուստի խոսքային գործունեության ուղղությամբ տարվող աշխատանքը պետք է նպատակատուղված լինի խոսքային նմուշների կիրառմանը:

Հաղորդակցվելու համար պետք է կարողանալ ոչ միայն իմաստալից նախադասություններ կառուցել և ջիանձանց արտասանած նախադասությունների բովանդակությունը ըմբռնել, այլև տվյալ համատեքստում մեկնաբանել լեզվական միջոցների գործածությունը: Լեզվական նյութի ընտրությունը պետք է պայմանավորված լինի ուսուցման նպատակներով, հաղորդակցական մտադրությամբ և թեմային վերաբերող կոնկրետ իրադրություններում այս կամ այն խոսքային նմուշների գործածությամբ: Առանց հատակորեն ճշգրտելու խոսքային մտադրությունը՝ հնարավոր չէ հաղորդակցվել: Կարևոր է բանավոր հաղորդակցության թեման, որով պայմանավորվում է մասնավորապես խոսույթի բովանդակությունը: Այսպիսով, հաղորդակցական նպատակները մատնանշում են, թե ինչու և ինչպես կարող է հաղորդակցվել սովորողը՝ արտահայտելով իր մտքերը և օգտվելով լեզվական միջոցներից:

Տարրական դասարաններում առաջին քայլերն են արվում խոսքային գործունեության զարգացման ուղղությամբ: Ուստի հաշվի առնելով աշակերտների սահմանափակ գիտելիքները օտար լեզվից՝ հարկավոր է քննադատական մտածողության ու հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն իրականացնել սովորողներին հետաքրքրող իրադարձություններ արտացոլող թեմաների և տեքստերի հիման վրա:

Տարրական դպրոցում քերականական նվազագույնը դրսևորվում է հիմնականում խոսքային նմուշների միջոցով: Օտար լեզուների ուսուցման հիմքը խոսքային նմուշներն են: Դրանք, իրենց կոնկրետ իմաստից բացի, ունեն նաև ընդհանրացված նշանակություն, ինչը հնարավորություն է տալիս ըստ տրված նմուշի կազմել նմանատիպ այլ նախադասություններ: Յուրաքանչյուր խոսքային նմուշ ընդգրկում է մեկ քերականական դժվարություն և ուսուցանվում է որոշակի տրամաբանական հաջորդականությամբ, օրինակ՝ առարկայի կամ գործողության, դրա որակի, հատկանիշի կամ գործողության հատկանիշի անվանումները: Անշուշտ, խոսքային նմուշների իմացությունը չի բացառում նաև քերականական կանոնների գործածություն:

Հարկ է նշել, որ խոսքային նմուշը երկխոսության կազմակերպման հիմքն է և հաճախ հանդես է գալիս որպես այս կամ այն խոսքային մտադրությունը դրսևորող տարբեր բնույթի ռեպլիկներ:

Երկխոսությունը պայմանավորված է իրադրությամբ: Իրական կյանքում դա շրջապատող միջավայրն է, տեղի ունեցող իրադարձությունները, որոնք միավորում են գրուցակիցներին և որոշում հաղորդակցության, շփման բնույթը:



Ռեպլիկներն ի հայտ են գալիս խոսքային իրադրության մեջ և տարբերակվում ըստ բնույթի՝ արձագանք-ռեպլիկ կամ խթան-ռեպլիկ: Ռեպլիկները ծագում են այս կամ այն հաղորդակցական իրադրության մեջ և տարբերվում են ինչպես հաղորդակցական մտադրության դրսևորմամբ, այնպես էլ ձևավորմամբ (կառուցվածքով), ինչը պետք է հաշվի առնել դրանք ուսուցանելիս:

Երկխոսության համար տիպական են ոչ միայն ռեպլիկները, այլև միջանկյալ բառերը, պատրաստի տիպային խոսքային մոտիվներն ու դարձվածաբանական միավորները, որոնք փոփոխության ենթակա չեն կամ մասնակիորեն են փոփոխվում, այսպես, օրինակ՝ bon, tiens, pardon, merci, super և այլն: Ռեպլիկներն ըստ ծավալի կարող են կազմված լինել ինչպես մեկ բառից, բառակապակցությունից, այնպես էլ մեկ կամ ավելի նախադասություններից: Իմաստային, կառուցվածքային և հնչերանգային ավարտվածությամբ բնորոշվող ռեպլիկները կազմում են մեկ ամբողջական երկխոսական միավոր (unité de dialogue), այսինքն՝ խթան-ռեպլիկը և արձագանք-ռեպլիկը հանդես են գալիս մեկ ընդհանրության մեջ: Արդ, սույն հոդվածում փորձ է արվել ընտրել և համակարգել տարրական դասարանների, ինչու չէ՝ նաև մեծահասակների, A1 մակարդակի, համար տարբեր հաղորդակցական մտադրություններ արտահայտող առավել հաճախակի գործածվող խոսքային մոտիվներն ու ռեպլիկները: Եվ այսպես, ներկայացնում ենք *խոսքային մոտիվներն ու ռեպլիկները հաղորդակցական տարբեր նպատակներ իրականացնելու և տարբեր համատեքստերում կիրառելու համար:*

**1. Ողջունել, պատասխանել ողջույնին**

Ռեպլիկ խթան

- Bonjour
- Comment allez-vous?
- Vous allez bien?
- Salut ... .
- Tu vas bien?
- Ça va bien?
- Ça va?

Ռեպլիկ արձագանք

- Bonjour, monsieur/ madame/ mademoiselle.
- Je vais bien, merci, et vous?
- Très bien, merci.
- Pas mal, et toi?
- Moi, ça va, et toi?
- ça va mal.
- ça ne va pas du tout.

**2. Հրաժեշտ տալ.**

Ռեպլիկ խթան

Au revoir, monsieur, madame.

- Ռեպլիկ արձագանք
- A bientôt.
- A demain.
- A plus tard
- et bonne journée.

**3. Ծանոթություն, տեղեկություններ՝ իր և իր ընտանիքի մասին.**

Ռեպլիկ խթան	Ռեպլիկ արձագանք
Comment t'appelles-tu?	Je m'appelle....
Vous vous connaissez?	Non, nous ne nous connaissons pas.
Enchanté de faire ta(votre) connaissance.	
Quel âge as-tu?	J'ai ... ans.
Où habites-tu?	J'habite....
Où habitez-vous?	Nous habitons...
En quelle classe es-tu?	Je suis en ....
Est-ce que tu habites loin de l'école?	J'habite loin....
Est-ce que tu as des parents ?	Je n'habite pas ....
	J'ai ma mère et mon père.
	J'ai ..., mais je n'ai pas ...
Est-ce que tu as des frères ?	J'ai... .
Et des sœurs ?	J'ai... .
Est-ce que votre famille est nombreuse ?	Notre famille est... .
Est-ce que tes parents parlent français ?	Notre famille n'est pas ....
Est-ce que tu fais de la gymnastique le matin ?	Mes parents parlent .../arménien, russe/.
Qu'est-ce que tu la fais le soir ?	Mes parents ne parlent pas... .
Qu'est-ce que votre famille fait le soir ?	Je fais .....
Est-ce que vous avez un téléviseur ?	Je ne fais pas.....
	Je....
	Nous.....
	Oui, nous.....

**4. Միրած զբաղմունքը, նախասիրությունները.**

Est-ce que tu aimes jouer à la balle ?	J'aime jouer à la balle.
Est-ce que tu aimes jouer au football ?	Non, je n'aime pas jouer au football.
Vas-tu souvent au cinéma ?	Je vais au cinéma chaque dimanche.
	Je ne vais pas souvent au cinéma.
Aimes-tu jouer du piano ?	J'aime jouer du piano.
Est-ce que tu joues du piano ?	Je joue du piano.
	Je ne joue pas du piano.
Aimes-tu la musique ?	J'aime la musique.
J'aime beaucoup les chansons françaises.	
Aimes-tu regarder la télévision ?	J'aime regarder.....
jouer aux boules de neige ?	J'aime jouer.....

**5. Բանավոր խոսքում կիրառվող մասնակիորեն փոփոխվող խոսքային նմուշներ.**

Qui est présent/ absent/?	Il /elle/ est absent/e/.
Nous sommes.../le mardi, 5 mai /	
Tu t'appelles comment?	Je m'appelle .....



Comment s'appelle-t-il?	Il s'appelle....
Où habites-tu?	J'habite à .....
Où habite ton frère/ ta sœur/?	Il/elle/ habite à ...
Quelle est ton adresse ?	Mon adresse est rue..., N.....
Quel âge a ton frère/ta sœur/?	Il/elle/ a .... ans.
Est-ce que tu as un ordinateur?	J'ai un ordinateur. Je n'ai pas d'ordinateur.
De quelle couleur est ton chapeau?	Mon chapeau est rouge/bleu, blanc../
Qui a des patins?	J'ai .... Je n'ai pas de....
Qu'est-ce qu'il y a dans ta chambre/ta serviette/?	Dans ma chambre/serviette/ il y a ...
Est-ce qu'il y a des supermarchés/cinémas/ dans votre ville/village/?	Il y a des cinémas dans notre ville. Il n'y a pas de supermarchés dans notre village.
Est-ce que tu aimes les sports?	J'aime les sports. Je n'aime pas les sports.
Où est le livre/le chat/?	Il est sous/ sur/ dans le....
Parles-tu français?	Je parle...
Est-ce que ta sœur/ton frère/ parle français? Elle/il ne parle pas français.	
<b>6. Ռեպլիկ-նմուշներ</b> գրույցը շարունակելու համար.	
Ah, oui? Comment? C'est possible. Et alors? Pourquoi?	
<b>7. Որևէ բան հաստատելու, համաձայնելու, զնահատման համար.</b>	
Oui. Mais oui. Bien sur. Je sais bien. Entendu. D'accord. Volontiers. Bon. Avec plaisir. Ecoute! Eh bien. Tiens. Vois-tu? Voyez-vous? Excusez-moi, je suis pressé. Voulez-vous? Peut-être. Pardon. N'est-ce pas?	
<b>8. Խնդրանքին հավանություն չտալու դեպքում.</b>	
Ça m'est égal. Cela ne me regarde pas. N'importe. Faites comme vous voulez. S'il vous plaît.	
<b>9. Խնդրանքին պատասխանելիս.</b>	
վստահ, դրական	անորոշ, անվստահ
Bien sur. Certes.	Qui sait?
Très volontiers.	Peut-être.
Avec plaisir.	Possible.
Et pourquoi pas?	Je ne sais pas.
Ah, oui. Si, si.	Je ne crois pas.
Moi aussi. Moi non plus.	
Je ne suis pas contre.	
D'accord. Bon. Entendu.	
Il faut.	



**10. Ուրախություն, հիացմունք, զարմանք արտահայտելու համար.**

Très bien! Parfait! Quelle chance! Que je suis heureux! Pas possible. En effet? Comment?

Ah oui? Vrai? Je suis heureux de te voir. Vraiment?

Ah oui? Vrai? Je

**11. Ինչ-որ բան անելու թույլտվություն խնդրելիս.**

Խթան-նեպիլիկ

Արձագանք նեպիլիկ/դրական

Puis-je .... ?

Oui.

Pourrais-je ...?

Si tu veux. Si vous voulez.

Me permettez-vous de...?

Mais, je te/vous en prie.

Մերժում/ափսոսանք

Non.

Je regrette, mais non.

Désolu, il est interdit de...

**12. Շնորհակալություն արտահայտելիս.**

Խթան-նեպիլիկ

Արձագանք նեպիլիկ

Merci, merci bien.

Pas de quoi.

Je vous remercie.

Ça ne fait rien.

Merci d'avance.

Je /te/ vous en prie.

Merci, vous êtes gentil/le/.

**13. Ներում խնդրելիս.**

Խթան նեպիլիկ

Արձագանք նեպիլիկ

Pardonnez-moi.

Je te pardonne.

Je m'excuse.

Je t'excuse.

C'est ma faute.

Oublions cela.

Je ne ferai plus.

Ce n'est rien.

Ce n'est pas grave.

**14. Հեռախոսային խոսակցության ժամանակ.**

Խթան-նեպիլիկ

Արձագանք նեպիլիկ/դրական

Je veux/voudrais parler à...

Ne quittez pas, je vous le passe.

Je voudrais savoir...

C'est bien ici.

Veux-tu laisser un message?

Quel numéro tu demandes ?

Արձագանք նեպիլիկ/բացասական

C'est un faux numéro.

Tu t'es trompé.

Vous vous êtes trompé.

Est-ce que je peux transmettre un message?

Oui, s'il vous plaît.

Pouvez-vous prendre un message?

Attendez, je vais noter.



Այդ դասակարգման առավելությունն այն է, որ վերոհիշյալ խոսքային մոդելներն անմիջականորեն օգտագործվում են խոսքաշարում՝ ամենատարբեր լեզվական գործառնություններ իրականացնելու համար: Այսպիսով, նման կառուցվածքագործառնության մոտեցման շնորհիվ հնարավոր է յուրացման բազմաթիվ օբյեկտները, այսինքն՝ «նյութի կազմակերպման միավորները» հասցնել նվազագույնի՝ բազմաթիվ քերականական կանոնների ու խոնարհման հարացույցների փոխարեն (Бим И.Л., 1988, с.12):

**Օգտագործված գրականություն**

1. ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N13 (Գլուխ 1, Միջնակարգ և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2010-2011 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ, էջ 24-62), ՀՀ կառավարության պաշտոնական հրատարակություն, Տիգրան Մեծ, 2010:
2. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, «Անտարես», 2004:
3. Լեզուների իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, ԵՊԼՀ, «Նորք գրատուն», Երևան, 2005:
4. Աստվածատրյան Մ.Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985:
5. Бим И.Л. Некоторые проблемы обучения диалогической речи. Иностранные языки в школе, N5, 1979:
6. Бим И.Л. Модернизация структуры и содержания школьного языкового образования (ИЯ), Иностранные языки в школе, N8, 2005, с. 2-6:
7. Cadre européen commun de référence pour les langues: apprendre, enseigner, évaluer. Division des Langues Vivantes, Strasbourg. Didier, 2001.

**РЕЗЮМЕ**

**Типовые фразы и реплики в процессе формирования коммуникативной компетенции**

**Анаит Аршакян**

В начальной школе обучение разным разделам иностранного языка/фонетика, грамматика, лексика/ и развитие коммуникативной компетенции происходят почти одновременно. Выбор языкового материала и преподавание обусловлены коммуникативной целью. В этом контексте большую роль играют типовые фразы, которые формируют одно целое, так как фонетика, грамматика, лексика являются основными звеньями между языковым материалом и коммуникацией. Типовая фраза создает базу для диалога, диалогической речи и чаще всего выступает как реплика разного характера, которая проявляет самые разные коммуникативные интенции.

*Ներկայացված է տպագրության՝ 04. 04. 2012 թ.:*



**ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅՅԱՆ**

*Ծնվել է Երևանում:*

*Ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և անզլերեն լեզվի ֆակուլտետը (1998-2003 թթ.) և նույն բուհի ասպիրանտուրան (2004-2006 թթ.): 2004թ. մինչ օրս ՀՀ Ազգային ժողովի փորձագետ է: Տպագրել է հոդվածներ՝ «Նախաշավիդ», «Մանկավարժություն», «Մխիթար Գոշ» ամսագրերում:*

**ՄԵՆՔ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻ**

**ՍԱՄՆԻԿՆ ԵՆՔ**

*Հոդվածը երաշխավորել է տպագրության «Նախաշավիդի» խմբագրական խորհրդի անդամ Անահիտ Հովհաննիսյանը*

**Համառոտագիր:** Հոդվածի հեղինակն անդրադարձ է կատարել ոչ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում ընթացող էկոլոգիական աղետին՝ կարևորելով բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ մարդու հոգատար, բարեխիղճ վերաբերմունքի դրսևորումը: Դա մեր և ապագա սերունդների առողջության ու առավել բարենպաստ կյանքի ապահովման հիմնական գրավականն է:


Այս ասպարեզում առկա են տեղաշարժեր, որոնք, անկասկած, դրական ներգործություն ունեն մեր երկրի էկոհամակարգի զարգացման վրա: Բնապահպանական առաջընթացի ապահովման գործում (որը բավականին բարդ լուծվող խնդիր է) կարևոր է բոլորի ներգրավվածությունը: Այստեղ յուրաքանչյուրը՝ բարձրաստիճան պաշտոնյայից մինչև շաբաթային քաղաքացի, պետք է գործի իր ուժերի ներածին չափով:

Այսօր Երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին: Մեր ընդհանուր «տունը» կարող ենք փրկել բոլորս միասին: Մոլորակի վրա անադարտ, կուսական անկյուններ գրեթե չեն մնացել: Առավել ևս, այդպիսիք չկան մեր փոքրիկ, խիտ բնակեցված երկրում՝ Հայաստանում:

*Մարդ-բնություն* փոխհարաբերությունները վաղուց արդեն մտել են մի փուլ, երբ մարդիկ ստիպված են պայքարել ոչ թե բնությունը նվաճելու, այլ այդ «նվաճման» արդյունքում դեռևս հրաշքով պահպանված խեղճուկրակ բեկորները փրկելու համար: Ամեն մարդ, անկախ տարիքից, պետք է գոնե հիմնական գծերով գիտենա, թե էկոլոգիական ինչ վտանգներ են սպառնում իրեն և իր հարազատներին, իր տանն ու երկրին: Հարկավոր է տեղյակ լինել՝ ինչպես պաշտպանվել այդ վտանգներից և ինչ անել, որպեսզի դրանք աղետի չվերածվեն:

Մեզնից յուրաքանչյուրը պատասխանատվության իր բաժինն ունի, և ամենքիս համատեղ ջանքերով միայն կարող են լուծվել էկոլոգիական մի շարք հիմնախնդիրներ:

Շրջակա միջավայրի աղտոտումը նոր չի սկսվել: Քարե դարում մարդիկ ապրում էին գարշահոտ, ծխով լեցուն քարանձավներում: Ահավոր կեղտոտ էին միջնադարյան քաղաքները, ուր տներից աղբն ու արտաթորանքն ուղղա-



կի փողոց էին թափվում՝ բարեբեր միջավայր ստեղծելով հազար ու մի տեսակ համաճարակների առաջացման համար: Դեռևս մեր թվարկությունից 400 տարի առաջ նշանավոր փիլիսոփա Պլատոնն անհանգստություն էր հայտնում, որ իր հայրենի Հունաստանում հատվում էին անտառները, իսկ հողը տուժում էր արոտավայրերի անխելամիտ օգտագործման պատճառով:

Սակայն այսօր շրջակա միջավայրի աղտոտումն ընդունել է աղետալի, համաճորակային չափեր: Մշտապես և մեծ քանակությամբ վտանգավոր քիմիական նյութեր են արտանետվում մթնոլորտ, լցվում գետերն ու օվկիանոսները: Ավելի ու ավելի շատ չքայքայվող թափոններ են կուտակվում մեր շուրջը: Կրճատվում են անտառային տարածքները: Երկրի երեսից իսպառ վերացել են կենդանիների և բույսերի մի շարք տեսակներ:

Մարդու և բնության միջև հակամարտության հասունացումը կանխատեսվել է դեռևս անհիշելի ժամանակներում: Քեոփսի բուրգի մակագրությունը զգուշացնում է. «Մարդիկ կկործանվեն բնության ուժերն օգտագործել չկարողանալու և իրական աշխարհը չճանաչելու պատճառով»:

Այս առումով ուշագրավ է մի ավանդապատում.

*Երբ երկրի երեսին ամեն կենդանի բան արդեն արարվել էր, կենդանիները խորհրդի են նստել, թե ու՞մ կարգեն իրենց տիրակալ: Ժողովի ժամանակ բուն վեճ է ծավալվում: Միայն ծովի խորքում ապաստան գտած ձուկը ժողովին չէր ներկայացել: Մի քանի օր ու գիշեր չեն դադարում աղմկոտ վեճերը: Վերջապես մարդուն ընտրում են իրենց իշխան: Այդ ժամանակ ձուկը գլուխը դուրս է հանում ջրից և դիմում երկնքում սավառնող արծվին.*

- Հը, հիմա ու՞մ պիտի հնազանդվենք մենք:

- Մարդուն:

*- Ավա՛ղ, ոչ դու, որ ճախրում ես կապուտակ երկնքում, ոչ էլ ես, որ լողում եմ սառնորակ ջրերում, այսուհետ հանգիստ չենք ունենալու:- պատասխանում է ձուկը:*

Բարեբախտաբար, ամեն ինչ այնքան էլ տխուր չէ, որքան ներկայացված է այդ պատմության մեջ: Այսօր մեր երկրում գործում են տարբեր խոշոր կազմակերպություններ, որոնք ստանձնում են քնապահպանական ծրագրերի հովանավորությունը: Մի շարք քնապահպանական հասարակական կազմակերպություններ /CSAP, «Բյուրակն», «Փրկենք կենդանիներին», «Կանաչ արահետ», «Արևորդի», «Հանուն մարդկային հասարակության կայուն զարգացման», «Էկոլոր», «Խուստուփ», «Կանաչ երկիր» և այլն/ զբաղվում են քնապահպանական խնդիրներով՝ փառատոների կազմակերպում, անտառային տարածքների պահպանություն, թափառող կենդանիների պաշտպանություն, քարոզչություն՝ կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբեր-

մունքի դրսևորման վերաբերյալ, հասարակության տարբեր շերտերին էկոլոգիական կրթության ապահովմամբ, անհրաժեշտ բնապահպանական տեղեկատվության տարածմամբ, էկոլոգաբոսության զարգացմամբ:


Էկոլոգիական գիտելիքներով զինված բնակչություն ունենալու համար պետք է ապահովենք մեր երեխաների էկոլոգիական դաստիարակությունը՝ դեռևս նախադպրոցական տարիքից:

Էկոլոգիական կուլտուրան սկզբնավորվում է համապատասխան բնույթի նախագիտելիքների կուտակմամբ: Այն ենթադրում է նաև հուզագգայական վերաբերմունքի առկայություն, բնության գեղեցկությունը և կենդանի օրգանիզմները պահպանելու գործուն պատրաստակամություն: Դիտումները, բնապահպանական բովանդակությամբ խաղերը, խաղային զարգացնող իրավիճակների, հեքիաթների, մանկական տարբեր ստեղծագործությունների օգտագործումը, պարապմունքների, տոնահանդեսների, զբոսանքների, էքսկուրսիաների կազմակերպումը, մանկապարտեզում կանաչ գոտիների ստեղծումը յուրաքանչյուր երեխայի մեջ կծնավորեն գիտակցական-ճշմարտացի վերաբերմունք, գործնական վարքագիծ՝ բնապահպանության գործում: Դա էլ կդառնա էկոլոգիական դաստիարակության չափանիշ: Էական է նաև ծնողների շրջանում էկոլոգիական գիտելիքների քարոզչությունը:



Մանկապարտեզի կրթական համալիր ծրագրի «Էկոլոգիա» բաժինը կոչված է իրականացնելու էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրներ: Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության գործընթացն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «**Ճանաչիր, սիրիր, պահպանիր**» կարգախոսով: Այդ կերպ հնարավոր է փոքրիկի մեջ ձևավորել ճանաչողական գիտելիքներ և ունակություններ իր և շրջակա միջավայրի վերաբերյալ, սեր արթնացնել այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է նրան՝ լինի դա կենդանի, թե անկենդան բնության մասնիկ, ձևավորել պահպանողական վերաբերմունք և վարքագծի ճիշտ դրսևորում:

Ծրագրի խելամիտ իրականացման պարագայում երեխան կկառուցի իր «աշխարհը»՝ գծելով սեփական պատկերացումների, զգացողությունների, մտքերի և նախասիրությունների շրջանակը: Երեխայի մեջ քայլ առ քայլ կծնավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, և շրջակա աշխարհում ամեն ինչ սերտորեն փոխկապակցված է. բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ:



**Էկոլոգիական կրթությունը նախատեսում է՝**

- ա.** բնության նկատմամբ հումանիստական վերաբերմունքի դաստիարակում,
- բ.** էկոլոգիական տարրական պատկերացումների համակարգի ձևավորում,
- գ.** գեղագիտական զգացմունքների ձևավորում (կարողանալ տեսնել բնության գեղեցկությունը, զմայլել նրանով, այդ զգացումներն արտահայտել ստեղծագործական գործունեությամբ կերպարվեստով, հեքիաթ, ոտանավոր, պատմվածք հորինելով):

Նման գործառույթների իրականացման կարևոր պայմանը ծնողի, դաստիարակի և այլ մեծահասակների օրինակն է:

Գիտակցական և ակտիվ բնապահպան վերաբերմունքի ձևավորման չափանիշներն են՝

**ա.** Բնության նկատմամբ խնամքի և հոգատար վերաբերմունքի դրսևվորում՝ մարդկության համար դրա բարոյագեղագիտական և գործնական նշանակության նկատառմամբ:

**բ.** Կենցաղում, բնության մեջ գտնվելիս վարքագծի կանոնների յուրացում և կիրառում:

**գ.** Բնության նկատմամբ գործնական հոգատարություն և այլոց վերաբերմունքի գնահատման կարողություն:



Վերոհիշյալ խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը նկատառելով՝ մանկապարտեզի բարձր խմբերի համար առաջարկում են տարաբնույթ պարապմունքներ, որոնք կարելի է նաև կազմակերպել փոքրերի խմբերում՝ փոփոխելով դիդակտիկական խնդիրները, հարմարեցնելով դրանք երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին:

Մանկապարտեզում երեխաներն էկոլոգիական գիտելիքներ ստանում են ոչ միայն հատուկ պլանավորված պարապմունքների ժամանակ, այլև զբոսանքների, էքսկուրսիաների, ընթերցանության, դիդակտիկ խաղերի, տրամաբանական խնդիրներ լուծելու, մանկապարտեզի բնության անկյան միջոցով:

**Չքոսանք այգում:** Մանկապարտեզի այգին նպաստավոր պայմաններ է ստեղծում երեխաների էկոլոգիական դաստիարակությունը կազմակերպելու համար: Այստեղ իրականացվում է բուսական և կենդանական աշխարհի հետ անմիջական ծանոթացում: Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում են թռչունների դայալյին: Սկսվում է անմիջական զրույց թռչունների տեսակների, նրանց օգտակարության վերաբերյալ: Երեխաները հետևում են թռչունների վարքին: Դաստիարակը երեխաների էկոլոգիական գիտելիքներն ամրակայելու նպատակով հարց է ուղղում տարվա եղանակների վերաբերյալ:

Վերջիններս էլ վերլուծական համեմատականներ են անցկացնում տարվա եղանակների միջև, պատմում եղանակային փոփոխությունների, յուրաքանչ-յուր եղանակին բնորոշ առանձնահատկությունների մասին: Գիտելիքների հետ մեկտեղ երեխաները բնության գրկում ստանում են դրական հույզեր, անմոռանալի տպավորություններ:

**Բնագիտական կենտրոն:** Այստեղ ներկայացված են բուսական աշխարհի տարբեր տեսակներ (սենյակային բույսեր, ծաղիկներ): Երեխաներին հնարավորություն է տրվում ինքնուրույն խնամելու բույսերը և հետևելու նրանց աճին:

**Ընթերցանություն:** Հատուկ ընտրված գրական ստեղծագործությունների միջոցով երեխաները ծանոթանում են ընտանի և վայրի կենդանիներին, նրանց տեսակներին բնորոշ առանձնահատկություններին: Գրական ստեղծագործություններում հաճախ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչները ներկայացված են անձնավորված. նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի բնավորությամբ, խառնվածքով, վարքով, ինչը ստիպում է երեխաներին համեմատել կերպարները, վերլուծել, տրամաբանական



գործողություններ իրականացնել:


**Դիդակտիկ խաղեր:** Անցկացվում են հատուկ պլանավորված խաղեր, որոնք ունեն ուսուցողական ուղղվածություն: Դիդակտիկ խաղերն իրականացվում են տարբեր միջոցներով.

- Երեխաներին տրվում են նկարներ, որտեղ կարող են պատկերված լինել բույսեր, կենդանիներ, ջրային և ցամաքային միջավայր: Հատուկ հարցերի և խաղի կանոնների միջոցով բացահայտվում են երեխաների ճանաչողական ունակությունները, և լրացվում են գիտելիքները:

- Դաստիարակը երեխաներին ներկայացնում է կենդանի և անկենդան աշխարհի համար կենսական անհրաժեշտություն ունեցող երևույթներ և հարցերի միջոցով փորձում բացահայտել նրանց գիտելիքները: Այսպես, օրինակ՝ ինչ կարող է լինել, եթե հանկարծակի վերանա սրանցից որևէ մեկը՝ արև, լուսին, ջուր, հող, ծառ:

- Տարբեր կենդանիների և բույսերի պատկերներով ներկայացվում են առարկաներ, և տրվում է առաջադրանք՝ ներկայացնել դրանց գույները, նշանակությունը, կարևորությունը, կապը այլ բույսերի և կենդանիների հետ:

Նախադպրոցական հաստատություններում անհրաժեշտ է անել առավելագույնը՝ կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ երեխաների մեջ



գիտակցական վերաբերմունքի, սեփական դիտարկումներն ընդհանրացնելու և համեմատելու, շրջակա միջավայրի գեղեցկությունը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողության դաստիարակման նպատակով:

Նախադպրոցական հաստատությունների գերխնդիրն է՝ ձևավորել մարդասեր, սոցիալապես ակտիվ, ստեղծագործող անհատ՝ ընդունակ սիրելու, հասկանալու շրջապատող աշխարհը, բնության առանձնահատկությունները, խնամքով վարվելու բնության հետ և կանխատեսելու իր արարքների հնարավոր հետևանքները:

Անհրաժեշտ է սերմանել աճող սերնդի էկոլոգիական նոր գիտակցություն: Այս դեպքում երեխաները բնության նկատմամբ իրենց վերաբերմունքը կսկսեն բնակենտրոնության դիրքերից. դա նշանակում է՝ որքան էլ մարդուն բնորոշ է գիտակցությունը, այնուամենայնիվ, նա նույնպես բնության մի մասնիկն է: Այս իմաստով բնապահպանությունը ոչ թե գիտություն է, այլ վերաբերմունք և աշխարհայացք: Անկախ այն հանգամանքից, թե ապագայում ինչ մասնագիտություն կունենա երեխան, նա պարտավոր է հասկանալ իր դերը շրջապատող աշխարհում, գիտակցել իր արարքների հետևանքները, ունենալ իր պատկերացումները բնության օրենքների վերաբերյալ:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը ներկա ժամանակներում «բնություն-մարդ» փոխհարաբերությունների կարգավորումն է՝ մարդկային բնապահպան գործունեության միջոցով: Դրա արդյունքում պահպանվում և ապահովվում է մարդկության հետագա գոյությունը: Բնապահպան գործունեությունն ուղղված է գոյապահպան կենսագործունեությանը: Պահպանելով բնությունը՝ մարդիկ իսկապես պաշտպանում են իրենց գոյությունը:

Ֆրանսիայի մանկապարտեզներում 5-6 տարեկան երեխաներին տանում են անտառ, ցույց տալիս ծառ ու ծաղիկ: Ծաղիկների կողքին մեծ վահանակներ են փակցնում. «Խնդրում ենք՝ մեզ չքաղել. հենց այն պահին, երբ մեզ պոկեք, մեզ կսպանեք». ստորագրություն՝ «Վայրի ծաղիկներ»: Այսինքն՝ երեխան մանկապարտեզից արդեն գիտի, որ ծաղիկը քաղելով՝ ոչնչացնում է բնությունը, և այլևս չի պոկում ծաղիկը: Մանկապարտեզի պատերից մեկին փակցված են իրենց շրջապատի թռչունների, իսկ մյուս պատին՝ ծաղիկների նկարներն ու անունները: Այս հրաշալի մտադրացումը ցանկալի է իրականացնել մաս մեր մանկապարտեզներում ու դպրոցներում:

Ժ. Ժ. Ռուսոյի աշխատություններում հստակ ընդգծվում է երեխաներին բնության հարուստ աշխարհ ընդգրկելու անհրաժեշտությունը. «Մարդն ապրում է բնության շնորհիվ: Մեր կարողությունների, մեր օրգանների ներքին զարգացումը դաստիարակությունն է, որը մենք ստանում ենք բնության կողմից»:




Երեխաներին բնապահպանական գործընթացի մեջ ներգրավելու անհրաժեշտությունը շեշտադրող մի պատմություն է Էկոլոգիական մտածողությամբ օժտված 12-ամյա շվեդ տղայի՝ Ռոլանդ Տիեմդսոնի կյանքի դիպվածը: Երեխան պատահաբար հեռուստատեսությամբ դիտում է հաղորդում արևադարձային անտառների և դրանց գոյությանն սպառնացող վտանգների մասին: Նա լրջորեն անհանգստանում է տեսլյալ մտքից, երբ ինքը մեծանա, հնարավոր է, որ մոլորակի վրա այլևս արևադարձային անտառներ մնացած չլինեն: Որոշում է անհապաղ ինչ-որ բան ձեռնարկել, և նրա գլխում մի հետաքրքիր միտք է ծագում՝ համադասարանցիների հետ (ուսուցչի ղեկավարությամբ) կազմակերպել թխվածքաբլիթների վաճառք, որից ստացված շահույթը ծառայեցնել արևադարձային անտառների փրկության գործին: Երեխաների բիզնեսը հաջող ընթացավ, և նրանք շուտով կարողացան Հարավային Ամերիկայում գտնվող «Մոնտեվերդե» արգելոցի համար չորս հեկտար անտառ գնել: Օրինակը վարակիչ էր, և շուտով ստեղծվեց «Մանկական արևադարձային անտառ» միությունը, որի կազմում ընդգրկվեցին հազարավոր շվեդ դպրոցականներ:



Իրենց հավաքած գումարով նրանք հեռավոր Կոստա Ռիկայում յոթ հազար հեկտար տարածությամբ անտառ գնեցին նույն արգելոցի համար: Արգելավայրի ղեկավարությունը, ի նշան երախտագիտության, անտառային այդ տարածքն անվանեց «Մանկական անտառ՝ ընդմիշտ»: Իսկ շվեդ երեխաների օրինակին հետևեցին այլ երկրների՝ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի նրանց հասակակիցները:

Բոլորս պետք է ներգրավվենք մեր երկիրն Էկոլոգիապես պահպանելու և կատարելագործելու գործընթացում, բոլորս՝ մեր ուժերի ներածին չափով. պետական պաշտոնյան՝ բնապահպանական ճիշտ որոշումներ կայացնելով, բարերարը՝ Էկոլոգիական ծրագրերի հովանավորչությունը ստանձնելով, Էկոլոգիական հասարակական կազմակերպությունները՝ առկա բնապահպանական խնդիրները բարձրաձայնելով, անհրաժեշտ բնապահպանական տեղեկատվություն տարածելով, մանկավարժները՝ սերունդներին Էկոլոգիապես կրթելով, շարքային քաղաքացին՝ բուսական աշխարհի հրաշալի տեսարանները խնայելով, կենդանական աշխարհի ներկայացուցիչներին չվնասելով, շրջապատը մաքուր պահելով:

Էկոլոգիական շարժումն առաջին հերթին սկսվում է բակից. յուրաքանչ-յուր ոք, մաքուր պահելով իր բակը, ապահովում է մոլորակի մաքրությունը: «Դա շատ պարզ է՝ առավոտյան կարգի բերելով քեզ, կարգի բեր նաև քո



Մոլորակը՝ խորհուրդ էր տալիս Փոքրիկ Իշխանը Սենտ Էբգյուպերիի համանուն հեքիաթ-վիպակում: «Մեր մոլորակի»՝ մեծ աշխարհի այս գողտրիկ անկյան մաքրության համար պատասխանատու ենք բոլորս: Այն փոքր է այնքան, որ անգամ շատ մեծ գլոբուսի վրա հնարավոր է ծածկել մատի ծայրով: Մի՞թե մենք չենք կարող մաքուր պահել այն...

### Օգտագործված գրականություն

1. Ռուզան Առաքելյան, Էլենորա Վարդանյան, Ռազմիկ Պետրոսյան, Արսեն Բաբաջանյան, Գոռ Բաղդասարյան, Էդուարդ Քանքանյան, Էլենորա Հարությունյան, Նարինե Դանեղյան, Աշոտ Դուկասյան, Թագուհի Գեգոզյանյան, Լիլիթ Միսակյան, Անի Աղաբաբյան, Գոռ Բաբոյան, Սարգիս Եղիազարյան, Էվելինա Գրիգորյան, Մուշեղ Բաղդասարյան, Նարե Աղաբաբյան, Դավիթ Մարտիրոսյան, Լիլիթ Բաբոյան, Հայաստանի էկոլոգիական հիմնախնդիրների այբուբեն փոքրերի և մեծերի համար, «Մանանա» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոն, Եր., 2003:
2. Ա.Ս. Մարոսյան, Ա.Մ. Դալլաբյան, Նախադպրոցական մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Գասպրինո», 2005թ.:
3. Деларю В.В., Социальная экология и массовое сознание, Волгоград: ВолГАСА, 2000г.
4. [http://potok.ua/last-articles/detskiy\\_tropicheskiy\\_les.htm](http://potok.ua/last-articles/detskiy_tropicheskiy_les.htm)
5. <http://www.zham.am/index.php?lid=am&pageName=Ecology>

## РЕЗЮМЕ

### Мы – частица природы

Сона Аветисян

В статье говорится об экологическом бедствии не только в нашей стране, но и во всем мире. Показана важность бережного отношения человека к растительному и животному миру, которое является гарантией обеспечения здоровья и более благоприятной жизни подрастающего поколения.

В статье также рассмотрены экологические сдвиги в нашей стране, которые несомненно имеют позитивное влияние на развитии экосистемы нашей страны, подчеркнута важность интегрирования разных типов общества в сложном процессе обеспечения экологического прогресса.

*Ներկայացված է տպագրության՝ 01. 03. 2012 թ.:*

ԿԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է Էջմիածին քաղաքում: Ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գեղագիտության ֆակուլտետի երաժշտական բաժինը: Մասնակցել է միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված շուրջ 8 դասընթացների: Կազմակերպել և անցկացրել է բազմաթիվ մասնագիտական սեմինարներ: Մի շարք ծրագրերի, հոդվածների և գրքերի հեղինակ է:

Նախադպրոցական կրթության համակարգում է 1972 թվականից: Այժմ աշխատում է Կրթության ազգային ինստիտուտում, որպես երաժշտության մեթոդիստ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հոդվածը երաշխավորել է տպագրության խմբագրական խորհրդի անդամ Յու. Յուզբաշյանը

**Համառոտագիր:** Հոդվածում ցույց է տրված խաղերի միջոցով երաժշտության ուսուցման անգնահատելի դերը երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում: Արված է մեթոդական հիմնավորում, որը երաժշտության դաստիարակներին կօգնի ճիշտ և նպատակային կազմակերպելու երաժշտական խաղերը:


Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գեղագիտական համակարգն այսօր էական փոփոխությունների է ենթարկվել: Այդ փոփոխության էությունն այն է, որ շեշտադրվում է արվեստի դաստիարակչական դերը: Այսինքն՝ երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է դառնում արժևորել արվեստի զարգացնող նշանակությունը ստեղծագործ անհատի, մարդու ձևավորման գործում:

Հումանիտար մանկավարժության համատեքստում երաժշտական դաստիարակությունը ուղղակիորեն միտված է մարդու հուզական ոլորտին: Այն հրաշալի միջավայր է երեխաների արժեքային կողմնորոշումների լիարժեք զարգացման և անձի ձևավորման համար:

Ժամանակակից մանկավարժի մասնագիտական ինքնահաստատման հիմքում ընկած են երաժշտության դաստիարակչական դերի խորքային գիտակցումը, խաղային միջավայր ստեղծելով երեխայի վրա ներազդելը և երաժշտաթերապևտիկ հմտություններին տիրապետելը:

Նախադպրոցական հաստատություններում երեխաների երաժշտական դաստիարակությամբ զբաղվում են հիմնականում երաժշտական դաստիարակները, որոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

Կարծում ենք, որ դաստիարակները նույնպես պետք է զբաղվեն երեխաների երաժշտական զարգացման հարցերով: Սակայն դաստիարակների երաժշ-



տական գրագիտության մակարդակը ցածր է, նրանք հիմնականում չունեն հենքային երաժշտական կրթություն, որը և դժվարացնում է համագործակցությունը երաժշտության դաստիարակների հետ: Այդ իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է դաստիարակների շրջանում աշխատանք տանել երաժշտության մեթոդիկայի և գործնական աշխատանքների ուղղությամբ:

Դաստիարակներն ակտիվ գործնական աշխատանքների ընթացքում յուրացնում են մանկական երաժշտախաղային գործունեության բազմաթիվ և բազմազան ձևեր՝ հիմնված ազգային բանահյուսության, ստեղծագործական խաղերի, պարերի, պարային և հնչերանգառիթմական, տեմբրահնչեղային իմպրովիզացիաների, երաժշտության կերպարանավորումների, երաժշտական բեմականացումների վրա: Պարապմունքների ընթացքում նման երաժշտական խաղային ստեղծագործական գործունեությունը բավականին հեշտացնում է երեխաների կողմից երաժշտական գիտելիքների յուրացումը:

Այսպիսով՝ երաժշտական խաղերը դիտվում են որպես այլ խաղերին «բարեկամ» խաղեր և երեխաների դաստիարակությանը նպաստող արդյունավետ միջոցներ:

Երաժշտական խաղերը գեղագիտական գործունեության ձևեր են, որոնք հենվում են արվեստի տարբեր տեսակների գեղարվեստական կերպարների վրա՝ երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ, բանաստեղծություն, այսինքն գտնվում են արտահայտիչ խոսքի, ռիթմական շաժման, ձայներանգի, գունային, գրաֆիկական և շարժումային ստեղծագործության մեջ:

Երաժշտախաղային գործունեության մեջ երեխաները ներգրավվում են ստեղծագործողի դիրքից. օգտվելով իրենց ծանոթ և մատչելի միջոցներից՝ նրանք կարող են ակտիվորեն արտահայտել իրենց զգացմունքներն ու ապրումները:

Երաժշտախաղային գործունեության կարևոր բաղադրիչ է երեխաների շարժողական և արտահայտչական ինքնարտահայտումը: Այսպիսի գործունեության մեջ գլխավոր անձը դառնում է երեխան, նրա ձայնը և շարժումները՝ հնչեղ, արտահայտիչ ժեստերով, կատարումները՝ ռիթմական հնչեղ նվագարաններով:

Երաժշտության միջոցով երեխայի ձայնային և շարժողական ինքնարտահայտումը կարելի է դիտել որպես նրա բնական զարգացման կարևոր միջոց: Այս դեպքում բոլոր հույզերն ու զգացմունքները բացահայտ են և արտահայտված երեխայի շարժումներով ու ձայնով:

Այսպիսով՝ երաժշտությունը և դրա արտահայտչամիջոցները միաձուլված պարի հետ, հանդես են գալիս որպես անձի ֆիզիկականի, հոգեկանի և հոգևորի ձևավորման միջոց:

Երաժշտախաղային գործունեությունը ստեղծագործական ակտիվության հիմք է, որը նպաստում է երեխաների հոգեկան գործընթացների կարգավորմանը, այդ իսկ պատճառով այն միաժամանակ լավագույն ախտորոշիչ միջոց է:

Երեխաների հուզաշխարհի ներդաշնակությունը, որ դրսևորվում է երաժշտական խաղերի ընթացքում, մենք կապում ենք հետևյալ ցուցանիշների հետ.

- Հուզահոգեբանական հարմարավետություն:
- Հուզական արտահայտչականություն:
- Շարժողական և ձայնային ստեղծագործական ակտիվություն:
- Գրական ինքնագնահատում:

1. Հուզահոգեբանական հարմարավետությունը երաժշտախաղային գործունեության մեջ արտահայտվում է որպես հավասարակշռվածություն, ճկունություն, բնական հույզերի ազատ արտահայտում, ռիթմայնություն, շարժումների համագործակցություն, խաղային միջավայրում ազատ կողմնորոշում և հաճույքի զգացում, որ առաջանում է շարժողական և արտահայտչական խաղային ակտիվությունից:

2. Հուզական արտահայտչականությունը երաժշտախաղային գործունեության մեջ ներկայացվում է որպես շարժումների և դիմախաղի արտահայտման կարողություն:

3. Շարժողական ձայնային ստեղծագործական ակտիվությունը երաժշտախաղային գործունեության մեջ խաղով տարված երեխայի՝ գեղարվեստական կերպարը յուրովի մեկնաբանող դիմախաղի ու շարժումների արտահայտչականություն է՝ ձայներանգի և հնչեղ ձայնային էֆեկտների ձևով:

4. Գրական ինքնագնահատումն արտահայտվում է որպես բնական վարք, կաշկանդվածության և վախի բացակայություն, դրական վերաբերմունք պարտության դեպքում, խաղի ընթացքում դրական հերոս ներկայանալու ձգտում:

Ներկայացնում ենք երաժշտական խաղերի օրինակներ, որտեղ բացահայտվում են երեխաների հուզաշխարհը և հուզահոգեկան ներդաշնակությունը:



## Թիթեռներն ու բզեզները

**Խաղի ընթացքը:** Երեխաները բաժանվում են երկու խմբի՝ «Թիթեռներ» և «Բզեզներ»: Երաժշտության ղեկավարն ընտրում է երաժշտություն՝ հաճախակի փոփոխվող տեմպով ու ռիթմով՝ թեթև թիթեռին և ծանր, դանդաղաչարժ բզեզին համապատասխան: Յուրաքանչյուր կրկնության ժամանակ երաժշտությունը փոխվում է՝ մեկ երկարում, մեկ կարճանում է:

**Առաջադրանք.** ուշադիր լսել և շարժվել միայն տվյալ կերպարին բնորոշ երաժշտության տակ, միևնույն ժամանակ հորինել կերպարին բնորոշ նոր շարժումներ:

**Չափանիշներ.** արագ կողմնորոշում՝ փոփոխվող երաժշտության ելևէջներում, ժամանակին ակտիվ շաժումներից պասիվին անցնելու կարողություն:

Ազատ պահ-վաճք՝ խաղային տարածության մեջ, ընտրած կերպարին բնորոշ շարժումների արտահայտիչ կատարում, ձևերի բազմազանություն, նախաձեռնության ցուցաբերում, անհատական խաղային կերպարի ստեղծում, համագործակցություն մյուս մասնակիցների հետ:



### Ազատ պար

**Խաղի ընթացքը.** երեխաները կանգնում են դեմքով դեպի շրջանի կենտրոնը:

Խաղավարը արագ, ռիթմիկ, պարային երաժշտության ուղեկցությամբ կատարում է գլխի, ուսերի, կոնքերի շարժումներ: Երեխաները կրկնում են դաստիարակի շարժումները: Սկզբից ձեռքով ութ անգամ դիպչում են գլխին, ուսին, կոնքերին: Դրանից հետո աստիճանաբար պակասեցնում են հպումները՝ չորս, երկու և վերջում մեկ անգամ: Կրկնության ժամանակ երաժշտության տեմպն արագանում է, և հրպման կետերն ավելանում են:

**Չափանիշներ՝** հստակ, համաձայնեցված շարժումներ երաժշտության լջմին և տեմպին համապատասխան:

### Օրորոցային

*Այս խաղը նպատակահարմար է անցկացնել շաժուն խաղերից հետո:*

**Խաղի ընթացքը.** երեխաները դաստիարակի հետ միասին նստում են հատակին՝ գորգի վրա: Երաժշտության հնչյունների ներքո դաստիարակը մեկ երեխայի պառկեցնում է գորգին և ռիթմիկ թեթև շոյում նրա թիկունքը:

Աստիճանաբար բոլոր երեխաները միանում են դաստիարակին և նուրբ շոյում գորգին պառկած մենակատարին: Հետո դաստիարակը պառկեցնում է մի քանի երեխայի գորգի վրա և հրահանգ տալիս մյուսներին շոյել և «քնեցնել» նրանց: Խաղի կրկնության ժամանակ դերերը փոխվում են:

**Չափանիշներ՝** երաժշտության բնույթին և տեմպին համապատասխան սահուն, համաչափ ձեռքերի և մարմնի շարժումներ, որոնք ձևավորում են անհանգիստ վիճակից հանգիստ վիճակին անցնելու ընդունակություն, վստահության զգացում, ինչպես նաև լարվածության բացակայություն, արտահայտչականություն և հուզականություն:

### Աթոռակներով խաղ

#### Խաղի ընթացքը

Երեխաները նստում են շրջանաձև դասավորված աթոռակներին՝ դեմքով դեպի կենտրոն /մեկ աթոռը վարողին/:

Խաղի առաջին մասում խաղավարի աթոռին նստած երեխան ցույց է տալիս որևէ շարժում: Երաժշտության վերջին ֆրագին համապատասխան անշարժանում է որոշակի դիրքում: Մյուս երեխաները կրկնօրինակում են խաղավարի շարժումը:

Խաղի երկրորդ մասում երաժշտության բնույթը փոխվում է՝ վերածվելով շարժում և ուրախ նվագի: Երեխաները երաժշտության ներքո վազքով անցնում են շրջանաձև դասավորված աթոռակների միջով: Երաժշտության ավարտին երեխաները նստում են աթոռակների վրա:

Նորից հնչում է առաջին մասի երաժշտությունը: Նոր խաղավարը ցույց է տալիս որևէ շարժում, և խաղը կրկնվում է:

**Չափանիշները:** Հորինված շարժումը կատարել երաժշտությանը համապատասխան ռիթմական պատկերով, շարժումները կատարել արտահայտիչ և բնական, համագործակցված, լիարժեք մկանային լարվածությամբ:

### Հաշիվ

#### Խաղի ընթացքը:

Երեխաները կանգնած են շրջանաձև՝ դեմքով դեպի շրջանի կենտրոնը: Խաղավարը կանգնած է կենտրոնում: Ընտրվում է որևէ ժամանակակից, ռիթմիկ երգ: Քայլելու ընթացքում խաղավարը երաժշտության ռիթմով մեկիկ-մեկիկ հաշվում է երեխաներին: Վերջին երեխան դառնում է խաղավար: Կրկներգի ժամանակ կենտրոնում կանգնած խաղավարը հորինում է պարային շարժումներ, մյուսներն ընդօրինակում են նրան:



Երգի կրկնության ժամանակ խաղավարը նորից սկսում է հաշվել, և փոխվում է խաղավարը:



**Չափանիշը՝** շարժումների համաձայնեցում երաժշտության հուզական բնույթին, բնական, ազատ, ճկուն շարժումներ, լիարժեք մկանային լարվածություն, հստակություն, ճկունություն, ռիթմիկ և հաճելի կատարում:

## Նավակ

**Խաղի ընթացքը՝** երեխաները նստում են շրջանաձև դասավորված աթոռակներին: Դաստիարակը կատարում է իր հորինած երգ-հանելուկը, իսկ երեխաները գուշակում են/ երգը պետք է լինի նավակի մասին/: Այնուհետև դաստիարակը՝ ձեռքին բռնած թղթից պատրաստված նավակը, «սլանում է ալիքներով»՝ կատարելով շրջանաձև շարժումներ: Մինչև նավակը «լողում է» շրջանով, երգը կրկնվում է մի քանի անգամ: Ամեն մի նոր շրջան կատարելիս հայտնվում է նոր խաղավար, և նավակը փոխանցվում է նրան: Խաղավարը թղթի նավակից հանում է գրությունը և հրահանգներ տալիս, օրինակ՝ «Երգե՛ք ուրախ, իսկ հիմա քնքուշ, բարկացած, կամակոր և այլն»:

Խաղավարը նույնպես մտնում է կերպարի մեջ, ընտրում համապատասխան շարժումներ, դիմախաղ, հնչերանգ:

**Չափանիշներ՝** հրահանգից հետո հուզական վիճակի արագ և ճիշտ կողմնորոշում, դիմախաղի ազատ օգտագործում, շարժումների ճկունություն: Շարժողական և ձայնային ստեղծագործական ակտիվություն:

## ԽՄԲավար

**Խաղի ընթացքը՝** երեխաները կիսաշրջանաձև նստած են աթոռակներին: Նրանց առջև դրված են քսիլոֆոն, մետաղաֆոն, հարվածային և հնչեղ նվագարաններ:

Կենտրոնում նստած է խաղավարը՝ առանց նվագարանի: Նա ձեռքերով և ոտքերով ցույց է տալիս տարբեր շարժումներ: Երեխաները ճշտորեն կրկնօրինակում են այն՝ յուրաքանչյուրն իր նվագարանով: Շարժումները կարող են լինել ամենաբազմազան՝ նույնիսկ ծիծաղելի: Խաղավարը կարող է կատարել երգը և միաժամանակ բովանդակությանը համապատասխան շարժումներ:

**Չափանիշներ՝** ազատ և մտածված դիմախաղ, առանձնահատուկ խաղային կերպարի ստեղծում, բազմազան տարբերակների առաջադրում,




հնչնարտաբերման միջոցների կիրառում՝ հարվածներ երկու ձեռքով և առանձին, ուժեղ և մեղմ, բարձր և ցածր, վերև, ներքև և այլն:

### Շրջաններ

**Խաղի ընթացքը:** Գաստիարակը երեխաներին նստեցնում է առանձին խմբերով և յուրաքանչյուր խմբի տալիս հակադիր հնչողությամբ նվագարաններ՝ քսիլոֆոն, զանգակներ, մետաղաֆոն, մարակասներ և թմբուկներ: Այնուհետև հատակին կավիճով նկարում է շրջաններ և պայմանավորվում երեխաների հետ, թե որ շրջանը նվագարանների որ խմբին է պատկանում:

Երեխաների խնդիրն է՝ ուշադիր հետևել և ժամանակին մտնել խաղի մեջ՝ այսինքն, պարզել, թե որ շրջանի մեջ է մտնելու խաղավարը:

**Չափանիշներ՝** խաղավարն անցնելով շրջանից շրջան, ուշադիր ունկնդրում է երաժշտությունը, դիտավորյալ խառնում նվագարանների ձայները՝ խաղային կերպար ստեղծելու նպատակով: Երեխաները գնահատում են իրենց կատարումները՝ դրական ինքնագնահատում:



### Վնուկներ

**Խաղի ընթացքը՝** երեխաները կանգնում են շրջանաձև՝ դեմքով դեպի կենտրոն: Խաղավարը մեկ քայլ է կատարում առաջ և ասում՝ «Լուսինեն կարծես «լուսին» լինի, Գայանեն նման է «գարնան», Մեսրոպը՝ «մերսեդես» է...»: Հայտարարված կերպարները ցուցադրում է նաև ժեստերով, շարժումներով, դիմախաղով, արտահայտիչ հնչերանգով: Մյուս երեխաները նմանակում են խաղավարի շարժումները: Խաղավարի դերը հերթականությամբ ստանձնում են բոլոր երեխաները:

**Չափանիշներ՝** անվանման ինքնատիպ խաղարկում, հնչերանգի հստակություն և ճշտություն, բավականություն՝ իր և խմբի անդամների կատարումներից, ուշադրության կենտրոնացում սեփական անձի վրա:

### Բոլորն ինձ նման

**Խաղի ընթացքը:** Երեխաները ցրվում են դահլիճով: Խաղավարը ձայնով և շարժումներով պատկերում է իր կողմից հորինված կերպարը, իսկ մյուսները կրկնօրինակում են այն: Խաղավարն իր դերը փոխանցում է որևէ երեխայի: Նոր խաղավարը երեք անգամ ծափ է տալիս և բարձրաձայն ասում «Բոլորն ինձ նման» և առաջարկում շարժումներ՝ հնչերանգային իր տարբերակով:



**Չափանիշներ՝** շարժումների արտահայտչականություն, ինքնատիպություն, հորինված կերպարի մեջ մտնելու արագություն, ազդեսփվության և կամակորության բացակայություն:

### Գտիր նՄանիդ

**Խաղի ընթացքը:** Երեխաները նստում են շրջանաձև, յուրաքանչյուրի ձեռքին կա մեկ նվագարան: Նվագարաններից երկուսն ունեն միևնույն ձայնը: Շրջանի կենտրոնում նստում է մեկ երեխա՝ փակ աչքերով: Երեխաները հերթականությամբ նվագում են իրենց նվագարաններով, իսկ կենտրոնում նստած երեխան գուշակում է երկու միևնույն ձայն ունեցող նվագարանները: Խաղավարը փոխվում է, և խաղը շարունակվում է:

**Չափանիշներ՝** ուշադրության կենտրոնացում, ձայներանգով նվագարանի ճանաչում:

### Գևաջք



**Խաղի ընթացքը:** Խաղին մասնակցում են բոլոր երեխաները: Նախապես ընտրվում են բոլոր անհրաժեշտ նվագարանները՝ շվի, մետաղաֆոն, դուդուկ:

Խաղավարը նվագում է շվի նվագարանով և շարժվում դահլիճով: Երեխաները առաջատարի սուլոցի ուղղությամբ շարվում են և հետևում նրան՝ փորձելով տարածության մեջ ճիշտ կողմնորոշվել: Խաղը շարունակվում է՝ փոխվում են խաղավարը և նվագարանը:

### Գտիր քո Մեղեդին

**Խաղի ընթացքը:** Երեխաները դահլիճի տարբեր անկյուններում կազմում են դարպասներ/ 2 հոգի/:

Յուրաքանչյուր գույգ մախապես ընտրում է երգը՝ օրինակ «Արև-արև», «Գառնուկ», «Ուրախ առավոտ» և այլն: Խաղավարը մախապես ընտրում է այն դարպասը, որի միջով նա պետք է անցնի: Երեխաները ցրվում են դահլիճով և երգում իրենց ընտրած երգերը: Խաղավարն «աչքերը փակած» շրջում է դահլիճով, լսողությամբ գտնում այն երգը, որը համապատասխանում է իր ընտրած դարպասին, գնում է նրանց հետևից, անցնում դարպասի միջով և բացում աչքերը: Խաղի կրկնության ժամանակ փոխվում է խաղավարը:

**Չափանիշներ՝** լսողությամբ ձայնի ուղղության ճշտում:

## Նվագախումբ

**Խաղի ընթացքը՝** երեխաները նստում են շրջանաձև: Դահլիճի մի անկյունում դրված են մանկական նվագարաններ: Կենտրոնում նստած է խաղավարը: Նա ձայնով նմանակում է անձրևի, քամու, ջրի, ամպրոպի, թռչունների և այլ ձայներ, իսկ երեխաները պետք է մոտենան նվագարաններին և ընտրեն նմանակված ձայնին համապատասխան նվագարանը և «նվագեն» նվագարանով:

Այն երեխան, ով ճիշտ և շուտ է ընտրում նվագարանը, կդառնա հաջորդ խաղավարը: Խաղի վերջում բոլոր երեխաները միասին նվագում են որևէ ձայնանմանակում:

**Չափանիշներ՝** ձայներանգով նվագարանի ճիշտ և արագ ընտրություն, կատարողական հմտության ձևավորում:

## Երաժշտական հեքիաթ

**Խաղի ընթացքը՝** երեխաները նստած են կիսաշրջանաձև, նրնց առջև դրված են մանկական նվագարաններ: Կենտրոնում նստած խաղավար-դաստիարակը պատմում է որևէ հեքիաթ: Դաստիարակի ցուցումով յուրաքանչյուր երեխա պետք է իր առջև դրված նվագարանով ներկայացնի հեքիաթի որոշակի հերոսին: Երբ բոլոր կերպարների նվագարանները ընտրված են, դաստիարակը նորից է կարդում հեքիաթը, իսկ երեխաներից յուրաքանչյուրն իր հերոսին ներկայացնում է համապատասխան նվագարանով: Հեքիաթի վերջում բոլոր նվագարանները միասին նվագում են, կարծես խաղում են իրար հետ:

**Չափանիշներ՝** ձայներանգով նվագարանների ճիշտ ընտրություն: Կերպարին բնորոշ ռիթմիկ կատարում:

## Ռիթմական նվագարան

**Խաղի ընթացքը:** Երեխաները նստում են կիսաշրջանաձև: Յուրաքանչյուր երեխայի ձեռքին 2 ռիթմական նվագարան է՝ մարակաս, չխչխկան, դիոլ, մուրճիկ, ափսեներ և այլն:

Հնչում է երգը: Առաջին քառյակին նվագակցում են մարակասներն ու չխչխկանները, կրկներգին՝ դիոլներն ու դափերը:





2-րդ քառյակին՝ 2 մուրճիկներ ու ափսեներ, կրկներգին՝ դիոլներն ու դափերը: Երբ կրկնում են երկրորդ անգամ, նվագակցում են բոլոր նվագարանները՝ ստեղծելով մի գեղեցիկ ռիթմական համահնչունություն: Խաղը կարելի է անցկացնել նաև մեկ այլ երգով:

**Չափանիշներ՝** ռիթմական նվագարանների ճիշտ կիրառում:

**Օգտագործված գրականություն**

1. Նախադպրոցական կրթադաստիարակչական համալիր ծրագիր, Երևան 2007թ:
2. Дошкольное воспитание-2010год:
3. А.Н.Зими́на. Основы музыкального воспитания и развития, „Владос”, 2000 год:

**РЕЗЮМЕ**

**Организация воспитательных работ посредством музыкальных игр**

**Каринэ Казарян**

В статье рассматриваются вопросы воспитания посредством музыкальных игр. Игры предназначены детям старшего дошкольного возраста. Пособием данных игр воспитывается в детях чувство долга перед друзьями, дружелюбие, уверенность в собственных силах, развивается творческое начало, развиваются музыкальные способности (муз. слух, ритм, память и т.д.).

Данные игры можно проводить и в группе с воспитателем, и в зале с музыкальным руководителем.

*Ներկայացված է ասիագրության՝ 06. 02. 2012 թ.:*



**ՆԱԶԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

*Ծնվել է Երևանում:*

*Ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Նախադպրոցական մանկավարժություն, հոգեբանություն և խորացված օտար լեզու» ֆակուլտետը:*

*1997-1998թթ. անցել է բուժ. պատրաստականության դասընթացներ Խ. Աբովյանի ՀՊՄՀ-ի «Ըժշկագիտության, մոր ու մանկան առողջության պահպանման և ԱԻ» ամբիոնում և ստացել վկայական՝ միջին բուժ. աշխատողի որակավորմամբ:*

**ՄԱՆԿԱՏԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱ-ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**


*Հոդվածը երաշխավորել է տպագրության «Նախաշավիղի» խմբագրական խորհրդի անդամ Անահիտ Հովհաննիսյանը*

**Համառոտագիր:** Ելնելով մանկատան երեխայի զարգացնող գործունեության բովանդակության վերլուծությունից, կարելի է ճիշտ գնահատել նաև դաստիարակության առաջատար դերը՝ նրա հոգեկանի և գիտակցության զարգացման առումով:

Մանկատանն անցկացրած ժամանակահատվածը կյանքի այն շրջանն է, երբ երեխայի առջև

բացահայտվում է իր շրջապատի մարդկանց փոխկապվածությունը: Մանկատան երեխան զգում է իր կախվածությունն իրեն անմիջականորեն շրջապատող մարդկանցից, պարտավոր է հաշվի առնել այն պահանջները, որոնք շրջապատի մարդիկ ներկայացնում են իր վարքին, քանի որ դա է իրականում որոշում նրանց հետ ունեցած իր խնդիրը, անձնական հարաբերությունները: Այդ հարաբերություններից կախված են ոչ միայն նրա հաջողություններն ու անհաջողությունները, այլև հենց դրա մեջ են նրա ուրախություններն ու դառնությունները, դրանք ունեն դրդապատճառի ուժ:

Նախադպրոցական տարիքում երեխաների բացասական վարքի դրսևորումները հուզում են և՛ մանկավարժներին, և՛ ծնողներին: Այդ տարիքում երեխայի դեռևս ներանձնային հատկությունները գտնվում են ձևավորման փուլում: Որքան փոքր է երեխան, այնքան դժվար է նրա անձի առանձնահատկությունների մասին միանշանակ եզրակացություն անելը: Հայտնի են անբարենպաստ մի շարք գործոններ, որոնք, ըստ պայմանների, կան դառնում են երեխաների վարքի մեջ ագրեսիվության պատճառներ, կան այս կամ այն չափով ազդում դրա վրա և համապատասխանաբար որոշարկում ագրեսիվ դրսևորումների եզակիությունն ամեն մի առանձին դեպքում: Որպեսզի ժամանակին լուծվեն երեխաների մոտ դրսևորվող բացասական վարքի հիմնախնդիրները, մասնագետները պետք է հարաբերականորեն կարճ ժամանակաընթացքում անցկացնեն երեխաների փոխհարաբերությունների վերաբերյալ հոգեբանական ախտորոշում և ընտրեն համապատասխան ու արդյունավետ տարբերակներ, հոգեբանական շտկողական հնարներ՝ նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների հետ աշխատելու համար: Այդ խնդիրներն էլ ավելի են



խորանում, երբ երեխան դաստիարակվում է ոչ թե ընտանիքում, այլ մանկատանը, որտեղ պատասխանատվությունն ընկած է ոչ թե ծնողների, այլ մանկավարժների ու դաստիարակների վրա:

Մանկատանը երեխաների դաստիարակության գործընթացի առաջին կազմակերպողը դաստիարակն է: Վերջինիս, եթե նա իր գործի նվիրյալն է, երեխաները հաճախ ընդունում են ոչ թե երկրորդ, այլ հարազատ մոր պես:

Մանկատան դաստիարակչական գործընթացն իրավամբ կրում է ստեղծագործական բնույթ: Դա նշանակում է, որ դաստիարակը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները: Մանկավարժական պրակտիկայում հաճախ է պատահում, երբ խելացի և բանիմաց մանկավարժը չի կարողանում իր խոսքը հասցնել երեխաներին, քանի որ հաշվի չի առնում յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները (խառնվածք, բնավորություն, ինչպես նաև տվյալ պահին նրա հոգեվիճակը և այլն):

Բնականաբար, դաստիարակը շատ բարդ և պատասխանատու աշխատանք է կատարում: Նա ինքն իր մեջ պետք է կրի համոզումն այն ամենի, ինչը փոխանցում է երեխաներին: Իր արժեհամակարգն էլ համապատասխանելու է դրան:

Մանկատանը մեծացող երեխաների դեպքում առավել կարևոր է, թե ինչպես և ում կողմից է նա դաստիարակվում:

Դաստիարակը հանդես է գալիս որպես գաղափարների կրող և դրանք տարածող անձ: Նա պետք է երեխաների մեջ սերմանի հասարակության մեջ ընդունված աշխարհայացքային համակարգը և այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ հայրենասիրությունը, մարդասիրությունը, ազնվությունը, խղճմտանքը և այլն: Իհարկե, դաստիարակը հաճախ գործ ունի ոչ թե այս կամ այն որակի արմատավորման, այլ անցանկալի որակներն արմատախիլ անելու հետ: Դրա համար դաստիարակը պետք է հավատացած լինի, որ հնարավոր է այդ որակները դարձնել մանկատան յուրաքանչյուր երեխայի սեփականությունը և կենսակերպի անբաժանելի մասը:

Նա պետք է փնտրի բարդ իրավիճակներից դուրս գալու լավագույն տարբերակը: Ինչ խոսք, դաստիարակը պետք է ընտրի ճիշտ ռազմավարություն:

Մանկապարտեզներում և հանրակրթական դպրոցներում մանկավարժն առավել հեշտությամբ է որոշում աշակերտների վարքագծի ճիշտ կամ սխալ լինելը: Այլ է խնդիրը մանկատաներում: Այստեղ մմանատիպ հարցերին պետք է լուծում տրվի՝ չմոռանալով յուրաքանչյուր երեխայի ինքնահաստատման մասին: Իսկ ինքնագնահատումը մանկատան երեխաների մեծամասնության

պարագայում, ինչպես գիտենք, գուրկ է օբյեկտիվությունից: Երեխաները ոչ միայն չեն ցանկանում տեսնել սեփական բացթողումներն ու սխալները, այլև ջանք չեն խնայում դրանց արդարացման համար:


Դաստիարակը պետք է կարողանա վերացնել ոչ ճիշտ համոզմունքները, հայացքներն ու գաղափարները: Նա այնպես է անելու, որ երեխան գիտակցաբար հրաժարվի դրանցից: Դաստիարակն այդպիսով երեխայի մեջ մշակում է ուղղվելու պատրաստակամություն: Հարկավոր է ճիշտ օգտագործել երեխայի հետաքրքրությունների շրջանակը:

Կարևորվում է ևս մեկ նրբություն, որը վերաբերում է մանկատանը բնակվող երեխաների գիտակցության բարձրացմանը, մասնավորապես ինքնագիտակցության զարգացման որակական տեղաշարժերի և սոցիալական վարքի միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերին:

Շատ կարևոր է դաստիարակի նրբանկատ վերաբերմունքը: Երեխաներն ինքնագիտակցության մեջ իրենց գնահատում են ըստ ընկերների և առհասարակ հասակակիցների շրջանում ընդունված լինելու աստիճանի: Նրանց մեջ շատ վառ է արտահայտված մտերիմ ընկեր, բարեկամ գտնելու ցանկությունը: Եվ քանի որ հիմնականում հենց հասակակիցն է հանդես գալիս համեմատության օբյեկտ դերում, ապա կարևոր է, որ մանկատան դաստիարակը երեխաների մեջ սերմանի մարդկային ու բարոյական համահավասար ընդունելի որակներ և հնարավորինս արմատախիլ անի առկա ախտաբանական դրսևորումները: Համեմատության մեջ անգամ երեխաները ձգտելու են նոր դրական որակների ու հատկանիշների ձեռքբերման:

Չափազանց բարձր ինքնագնահատման կամ մանկատան դաստիարակի կողմից տրվող չափազանց ցածր գնահատականի հետևանքով կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, որ երեխային կտան իրականության մեջ ոչ ճիշտ գնահատված լինելու զգացողություն: Եվ հատկապես թերագնահատված լինելու պարագայում մանկատան երեխան անհաջողություններին հակազդում է հուզական պոռթկումներով: Դրանք անդրադառնում են ուսումնական գործունեության արդյունավետության վրա: Երեխան անվստահ է դառնում սեփական ուժերի նկատմամբ: Նրա մեջ մարում է ինքնակատարելագործման ոչ միայն մղումը, այլև անձնային ներուժը:

Դաստիարակը պետք է հետևողական լինի երեխաների մեջ այնպիսի որակների ձևավորման ու կատարելագործման համար, որոնք կնպաստեն ինքնադաստիարակության գործընթացին՝ ապահովելով հետագայում մանկատան երեխաների լիարժեք ինքնադրսևորումը սոցիալական միջավայրում:



***Դաստիարակը կարող է.***

-երեխայի վրա անմիջապես ազդեցություն գործել՝ փորձելով նրա մոտ փոխել ինչ-որ բան,

-ազդել իրադրության վրա և ձեռնարկել համապատասխան միջոցներ,

-ազդեցության դաշտը տեղափոխել անձամբ ինքն իր վրա:

Մասնկատան երեխան զգում է իր կախվածությունն իրեն անմիջականորեն շրջապատող մարդկանցից. պարտավոր է հաշվի առնել այն պահանջները, որոնք շրջապատի մարդիկ ներկայացնում են իր վարքին, քանի որ դա է իրականում որոշում նրանց հետ ունեցած իր խնդիրը, անձնական հարաբերությունները: Այդ հարաբերություններից կախված են ոչ միայն նրա հաջողություններն ու անհաջողությունները, այլև հենց դրա մեջ են նրա ուրախություններն ու դառնությունները, դրանք ունեն դրդապատճառի ուժ: Դաստիարակ-երեխա ներդաշնակ փոխհարաբերությունների գործում կարևոր դեր ունեն պարապմունքները, որոնք հարկավոր է կազմակերպել շատ հետաքրքիր և խաղային, փոխգործուն մեթոդներով: Նպատակահարմար է պարապմունքն սկսել հոգեբանական բնույթի աշխուժացնող-թարմացնող խաղ-վարժություններով:

***Ահա այդպիսի մի օրինակ.***

Մասնակիցներից մեկը դուրս է գալիս սենյակից: Ներսում մնացողները բաժանվում են երկու խմբի: Նրանք մի քանի րոպեում պայմանավորվում են մնջախաղով ներկայացնել այնպիսի գործողություն, որը լավագույնս կարող է ներկայացնել տվյալ մասնագիտությունը: Դուրս եկած մասնակցի խնդիրն է՝ գուշակել, թե որ խումբն ինչ մասնագիտություն է ընտրել...: Խաղի բովանդակությունը կարելի փոփոխել ըստ կոնկրետ նպատակադրման և ճաշակի: Հաճախ երեխաները հարցերին պատասխանում են ցրված և ոչ ըմբռնումով: Հարկավոր է նրբանկատորեն և զգուշությամբ փոխել նրանց պահվածքը, որն իրենց համար անընդունելի է:

Այս և նմանատիպ հնարներ կարող են իրականացվել նաև ընտանիքում դաստիարակվող երեխաների հետ՝ ծնող-երեխա փոխհարաբերություններում ծագած խնդիրների լուծման նպատակով:

Հոգեկանի զարգացման յուրաքանչյուր աստիճան բնութագրվում է տվյալ փուլում դեպի իրականությունն ունեցած երեխայի որոշակի առաջատար վերաբերմունքով, նրա գործունեության որոշակի առաջատար տիպով: Նախադպրոցական տարիքում դա խաղն է:

Առաջատար գործունեության զարգացումը պայմանավորվում է հոգեկան պրոցեսների և երեխայի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների գլխավոր փոփոխություններով նրա զարգացման տվյալ աստիճանում:



Խոսելով անբարենպաստ պայմանների մասին, որոնք բացասաբար են ազդում երեխայի վրա, կարելի է թվել բազմաթիվ պատճառներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով մանկատան մթնոլորտի վրա: Մանկատան երեխայի համար վճռական նշանակություն ունի տիրապետող բարոյական այն մթնոլորտը, որը հաստատվում է մանկատան անդամների, ինչպես նաև չափահասների և հասակակիցների միջև:

Մանկատան երեխաների միջանձնային փոխհարաբերությունները, որոշ մեծահասակների բացասական օրինակը, նրանց անտարբերությունը, կոպտությունը և նման այլ դրսևորումներ ստեղծում են այն անբարենպաստ միկրոմիջավայրը, որը հետագայում «դժվար դեռահասների» ձևավորման պատճառներից մեկն է:


Կարգուկանոնի պարզեցված ըմբռնումը մանկատան երեխային զրկում է ազատորեն կողմնորոշվելու անկաշկանդ ու ակտիվ գործունեություն կատարելու հնարավորությունից: Դրա հետևանքը լինում է այն, որ նա սկսում է հակադրվել կոլեկտիվին, հասարակությանը:

Շատ կարևոր է երեխայի մոտ սեփական անձի նկատմամբ վստահության ու հավատի դրսևորումը: Յուրահատուկ դրսևորումներ է ստանում նաև դաստիարակչական ներգործություններին նրանց կողմից ցույց տվող «դիմադրությունը»: Այդ պատճառով էլ կարևոր նշանակություն ունի դժվար դեռահասների տիպերի առանձնացումը, որը թույլ կտա դասակարգել նաեւ դաստիարակչական աշխատանքի հնարները:

Սովորաբար երեխաներին դասակարգում են հետևյալ կերպ.

1. շփման ոլորտում խախտումներ ունեցող երեխաներ,
2. խիստ բարձր կամ խիստ ցածր հուզական հակազդումներ ունեցող երեխաներ /խիստ բարձր գրգռականություն և սուր հակազդումներ ունեցող, ընդհակառակը, պասիվ ու անտարբեր/,
3. միակողմանի մտավոր զարգացում ունեցող երեխաներ,
4. կամային որակների սխալ զարգացում ունեցող երեխաներ /կամակոր, թուլական, քմահաճ, ինքնական, անկարգ, անկազմակերպ/:

Այդ գործունեության պայմաններն ու սկզբունքները պետք է մանրակրկիտ կերպով հաշվառման ենթարկվեն, և այն պետք է իրագործվի մանկատան մանկավարժական անձնակազմի բազմապլանային ու սահող ձևերի ճյուղավորված ցանցի օգնությամբ: Միայն նպատակասլաց կերպով կառուցված այդպիսի համակարգը կարող է աստիճանաբար հանգեցնել երեխաների հակասոցիալական վարքի վերացմանը, բայց ոչ թե դժվար դեռահասներին հատուկ բացասական գծերի համահարթեցման, այլ նրանցում անձի բարոյականային կայուն ու դրական որակների ձևավորման ճանապարհով:




## Օգտագործված գրականություն

1. Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր: Ե., 1999, 205 էջ:
2. Ա. Վ. Հովհաննիսյան, Մանկատան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Երևան, 2007թ.:
3. Լալա Սմբատյան, «Նախադպրոցական մեթոդական նյութեր»:
4. Մասնագիտական ամսագրեր՝ «Նախաշավիղ» 2-3, 2008թ., 2011թթ. «Հոգեբանությունը և կյանքը», «Մանկավարժական միտք»:
5. Кулагина И. Ю., Возрастная психология (Развитие ребенка от рождения до 17 лет). М.: Изд.-во УРАО, 1997, 176с.
6. Слободчиков Б. И., Исаев Е. И., Основы психологической антропологии. Психология развития человека: Развитие субъективной реализации в онтогенезе: Учебное пособие для вузов,. М., Школьная пресса, 2000, 416с
7. Шванцара Й. Диагностика психического развития, Прага, 1978
8. Эльконин Б. Д., Запорожец А. В., Психология детей дошкольного возраста: М, 1964, 365с.

## РЕЗЮМЕ

### Особенности психолого-педагогической работы, проводимой с детьми детских домов

Назик Погосян



Исходя из содержательного анализа развития ребенка в детском доме можно правильно понять роль образования как фактора, влияющего на активность ребенка, его отношение к реальности, которая влияет и на его психологию, и на его сознание.

Детство, проведенное в детском доме, это тот период, когда перед ребенком раскрывается человеческая отношение к окружающему миру.

Дети из детского дома чувствуют, что они напрямую зависят от окружающих, что им необходимо учитывать потребности людей во всем, потому что это на самом деле проблема личных взаимоотношений.

Эти отношения зависят не только от их успехов и неудач, но и положительно влияют на их настроение.

*Ներկայացված է, ԹԻՎԱԿՐՈՒՄԻՆ՝ 10. 05. 2012 թ.:*



## ԼԱՍԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

*Ծնվել է 1970 թվականին:  
Ավարտել է նախ՝ Ա. Բակունցի  
անվան հայկական մանկավար-  
ժական ուսումնարանի, ապա՝  
Երևանի պետական մանկավար-  
ժական համալսարանի «Տարրա-  
կան կրթության մանկավարժու-  
թյուն և մեթոդիկա» ֆակուլտետը:  
Որպես դասվար աշխատել է  
Արմավիրի մարզի Չանֆիդա գյու-  
ղի միջնակարգ դպրոցում: 2000  
թվականից աշխատում է Երևանի  
Գ. Մահարու անվան թիվ 176 հիմ-  
նական դպրոցում: Անդամակցում  
է Հանրային խորհրդի «Գիտու-  
թյուն և կրթություն» հանձնա-  
ժողովին և «Ձեռք» երիտասարդա-  
կան կրթական ՀԿ-ին:*

## ՈւՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Հոդվածը երաշխավորել է  
պագրության խմբագրական խորհրդի անդամ  
Ա. Հովհաննիսյանը*

**Համառոտագիր:** Հոդվածում արծարծվում է այն հարցը, թե երեխաների կրթության իրականացման գործում ինչ դեր է խաղում ծնող-ուսուցիչ համագործակցությունը: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին տեղյակ լինել, թե երեխայի հետ տանն ինչ է կատարվել, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի, տրամադրության, առաջադիմության վրա: Դա օգնում է ուսուցչին թե՛ երեխայի, թե՛ ծնողների հետ կատարվող աշխատանքներում:

Երեխաները մեր ապագան են: Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ինչպիսի՞ն կլինի մեր ապագան. սա պայմանավորված է այն իրողությամբ, թե ինչպիսի երեխաներ կկրթենք ու կդաստիարակենք մենք:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող-ուսուցիչ-դպրոց օղակը: Մեր հասարակությանն արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և ուսուցիչները:

Անցել են այն ժամանակները, երբ ծնողը բավարարվում էր առավոտյան երեխային դպրոց բերելով և կեսօրին տուն տանելով: Իսկ թե երեխան ինչպես կդրսևորեր իրեն դպրոցում, դիտվում էր միայն որպես ուսուցչի մտահոգության խնդիր: Այլ են հիմա ժամանակները և պահանջները: Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, լինի բանիմաց, անկաշկանդ, իմանա ու գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները:

Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա՝ օգտագործելով իր բոլոր ընդունակությունները, ինչպես և վատահոլություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ:



Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է հասկանալ ու օգնել երեխային: Ընդ որում, այդ օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները, այլև ծնողները: Անհրաժեշտ նրանց գիտակցությանը հասցնել, որ իրենք միայնակ չեն, իրենց կողքին են ուսուցիչները, մյուս ծնողները և ընկերները:

Ուսուցման և դաստիարակության գործընթացում ցանկալի արդյունավետության ապահովումը պայմանավորված է ոչ միայն առկա ուսումնական նյութի ճիշտ ու ժամանակին յուրացմամբ, այլև երեխայի արժեքային համակարգի ձևավորմամբ: Աշակերտների դաստիարակության գործում պետք է միատեղվեն բոլոր օղակների ջանքերը:

Երեխայի դաստիարակությունը ծնողների սահմանադրական պարտականությունն է: Նրանք պարտավոր են խորացնել դպրոցի և ուսուցչի հեղինակությունը, երեխաներին ներարկել սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ, նախապատրաստել նրանց հանրօգուտ աշխատանքի, ընտելացնել կարգապահությանը, հոգ տանել նրանց առողջության ու ֆիզիկական զարգացման մասին, խթանել ուսումը և նպաստել մասնագիտության ընտրությանը: Բնականաբար, դպրոցը պիտի ընդունի ընտանիքի այս օգնությունը:

Ծնողների ազդեցությունը երեխայի վրա շարունակվում է նաև դպրոցական տարիներին, ինչը ևս պետք է հաշվի առնվի դպրոցական ուսուցման ընթացքում:

Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացին:

Համագործակցության ընթացքում ծնողները պետք է նկատեն ուսուցիչների կողմից թույլ տված սխալները, և ուսուցիչները՝ ծնողների կազմակերպած ընտանեկան դաստիարակության ընթացքում նկատված սխալները: Սակայն փոխքննադատությունը պետք է լինի հիմնավորված ու կառուցողական:

Ուսուցիչ-ծնող շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

- Խոսակցությունը չսկսել անմիջապես երեխայի հետ կապված հիմնախնդրից:

- Չշտապել անմիջապես լուծել այն:
- Հետաքրքրություն ցուցաբերել ծնողի և նրա աշխատանքի նկատմամբ:
- Քննարկել այն հուզական վիճակները, որոնք առաջ են գալիս դպրոցի, ուսուցիչների, երեխաների պատճառով:
- Ուշադիր լսել և ընդունել այն, ինչ ասում է ծնողը. փորձել հասկանալ, թե ինչու է նա այդպես մտածում:
- Ծնողներին հատկացնել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:
- Ծնողներին տեղեկություններ հաղորդել անձամբ և ոչ թե երեխաների կամ երրորդ անձի միջոցով:

Ծնողների հետ հիմնական աշխատանքը դպրոցն անցկացնում է ծնողական միավորումների միջոցով, որոնք կրում են տարբեր անվանումներ՝ ծնողական կոմիտեներ, խորհուրդներ: Յուրաքանչյուր միավորում ունի իր կանոնադրությունը, որի մեջ նշված են դաստիարակության գործընթացի հիմնական ուղղությունները, իրավունքներն ու պարտականությունները:

Դպրոցի ուսուցչի հեղինակությունը էապես պայմանավորված է ծնողական ժողովների կազմակերպմամբ ու անցկացմամբ: Ուսուցչի գործունեությամբ է որոշվելու՝ կուզենա արդյո՞ք հետագայում ծնողն այցելել դպրոց, օգնել երեխայի դաստիարակության հարցերում, ճիշտ արձագանքել տվյալ բնագավառում երեխայի հետ կապված խնդիրներին: Դպրոցական պրակտիկայում ձևավորվել են ծնողական ժողովների հետևյալ ձևերը. դաստիարակչական ընդհանուր խնդիրներ, ծնողներին հուզող հարցերին վերաբերող ժողովներ, համակցված ժողովներ:

Ծնողական ժողովների անցկացման կարևոր փուլերից է դրանց նախապատրաստումը: Նախապատրաստական աշխատանքներում պետք է ներգրավվեն ծնողների ակտիվ ներկայացուցիչները: Ուսուցիչը որոշում է հարցերի շրջանակը, որոնք առաջ են գալիս ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելու ընթացքում: Ժողովների ժամանակ կարելի է կազմակերպել աշակերտական աշխատանքների ցուցահանդես: Օրինակ՝ լավագույն տետրերի, ստեղծագործական աշխատանքների և այլն:

Ծնող-դպրոց կապն ավելի անկաշկանդ ու հաճելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է, որ ծնողն իրեն ազատ ու վստահ զգա: Իսկ ինչպե՞ս հասնել այդպիսի արդյունքի: Դրա համար ուսուցիչն է հանդես գալու առաջարկներով ու նախաձեռնություններով:

Բաց դաս, թե ծնողական ժողով, ցերեկույթ, թե շաբաթօրյակ, մրցույթ, թե արշավ, մեր ծնողներն ամենուր ներկա են...



Սա ամենօրյա աշխատանքի արդյունքն է, որի հիմքում փոխադարձ վստահությունն ու հարգանքն է: Հայտնի է, որ բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարակության ու նախնական ուսուցման նրբություններին, ինչպես նաև մանկավարժական մեթոդներին: Մինչդեռ, ի սկզբանե լինելով առաջին դաստիարակը և ուսուցիչը, ծնողը պարտավոր է ունենալ այդ կարողությունները: Այդ հարցը հիմնավորապես կարգավորվում է ծնող-ուսուցիչ կապի միջոցով. էական է, թե ինչպիսին է նրանց մտահոգությունների բնույթը, որոնց առանցքը, ինչ խոսք, լինելու է կոնկրետ երեխայի ուսումն ու դաստիարակությունը և ապագա գործուն քաղաքացու նախադրյալների մշակումը օրեցօր փոփոխվող ու մեծացող մանկան բնավորության մեջ:

Կրտսեր տարիքի երեխաները գտնվում են սեփականության ընկալման առումով բավականին բարդ փուլում: Նրանք դեռևս նոր են փորձում դիմադրել անմիջական մղումների ազդեցությանը: Եթե մի բան նրանց դուր է գալիս, միշտ չէ, որ ընդունակ են զսպել այն անմիջապես վերցնելու բնական ցանկությունը:

Նման մի իրավիճակ ստացվեց իմ դասարանի աշակերտներից մեկի հետ, որը վերցրել էր ընկերոջ սրիչը: Իհարկե, նա վերադարձրեց այն և ներողություն խնդրեց ընկերոջից՝ պատճառաբանելով, որ պատահաբար է դա արել: Դասերի ավարտին անհատական գրույցի միջոցով փորձեցինք երեխային բացատրել, որ առանց զգուշացնելու որևէ բան վերցնելը գողություն է համարվում: Իսկ դա շատ վատ բան է: «Ընկերներդ կարող են աստիճանաբար խուսափել քեզ հետ շփվել, ու դու կմնաս առանց ընկերների, միայնակ ու անօգնական», - ասվել է երեխային: Արարքի մասին անմիջապես տեղեկացվեց նաև ծնողը: Անհատական գրույցի միջոցով ներկայացվեց երեխայի կողմից թույլ տրված սխալ արարքը, և պայմանավորվածություն ձեռք բերվեց, երկկողմ ու հետևողական գործունեության շնորհիվ կանխել երեխայի մեջ այդ վատ վարքագծի ձևավորումը:

Մեզանում այդ փոխադարձ կապն անընդմեջ շարունակվող գործընթաց է: Ծնողների հետ հիմնական աշխատանքն անցկացվում է ծնողական ժողովների, նամակների, գրույցների, խորհրդատվության, տնային այցելությունների միջոցով:

Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ընտանիքի հետ՝ լուծում է հետևյալ խնդիրները.

- ճանաչել երեխայի ընտանիքը:
- Ուսումնասիրել երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:
- Օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում երեխային դաստիարակելու:
- Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:
- Չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը:

Այսպիսով, ուսուցիչն ու ընտանիքը ամուր դաշնակիցներ են: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքների:

**Օգտագործված գրականություն**

1. Հ.Մ. Մախչանյան, Հանուն ուսուցման բարձր որակի, Երևան, 1986թ.:
2. Մ. Մ. Մանուկյան, Ուսուցչի անձնային և մասնագիտական որակների դրսևորումը աշակերտական ինքնավարության պայմաններում, Երևան, 1989թ.:
3. Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների նախաատես-տացիոն վերապատրաստան դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ:

**РЕЗЮМЕ**

**Сотрудничество учителей и родителей**

**Լալա Կիգրանյան**

В статье рассмотрен вопрос о роли сотрудничества родитель – учитель в осуществлении образования детей. Общение с родителями помогает учителю быть осведомленным в том, что произошло с ребенком дома, каким образом это так или иначе воздействовало на его психологию, поведение, настроение, успеваемость. Это поможет учителю в работе как с ребенком, так и его родителями.

*Ներկայացված է տպագրության 15.11.2011*



**Կարինե Թորոսյան      Կարինե Չիբուխչյան**  
**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻՒՑ**

Ձեռնարկում ներկայացված գործնական աշխատանքները կօգնեն ուսուցչին՝ դասագրքի սահմաններն ընդլայնելով խորացնել կրտսեր դպրոցականների գիտելիքները և զարգացնել նրանց ճանաչողական ակտիվությունը: Պատկերավոր լեզվով ասված՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբորատորիա է, որտեղ ընթանում է ճանաչողության գործընթացը: Մայրենիից աշակերտի գործնական աշխատանքը մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը, տեսությունն ու պրակտիկան:

Ձեռնարկի նպատակն է՝ օգնել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ կազմակերպելու աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունը, սովորեցնել նրանց մտածել, առանձնացնել գլխավորը երկրորդականից, կատարել ինքնուրույն մտահանգումներ:

Ձեռնարկում ընդգրկված են մեթոդական երաշխավորություններ՝ տարրական դասարանների «Մայրենի» առարկայից Գնահատման համակարգի բաղադրիչներից մեկի՝ գործնական աշխատանքների բովանդակության, գործադրման մեթոդների վերաբերյալ: Ձեռնարկի սովոր մաս են կազմում վերոհիշյալ աշխատանքների կոնկրետ նմուշօրինակները, որոնք սիրով հեղինակներին են տրամադրել հանրապետության տարբեր մարզերի ուսուցիչներ և ԿԱԻ-ի մասնաճյուղերի մասնագետներ:

**Գայանե Բեդիրյան      Մարինե Մանուկյան**  
**ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Ուսումնասօժանդակ ձեռնարկը տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին կօգնի՝ իրականացնելու Ընթացիկ գնահատման **գործնական աշխատանք** բաղադրիչին ներկայացվող պահանջները:

Ձեռնարկի հիմքում դրված են հիմնական դպրոցի «Մաթեմատիկան առարկայական չափորոշիչն ու ծրագիրը: Ընդգրկված գործնական աշխատանքները սովորողին հնարավորություն կընձեռեն մաթեմատիկայից ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու, համապատասխան սոցիալական հմտություններ ձևավորելու և սեփական գործունեությունից քաղելու նոր տեղեկատվություն: Ձեռնարկի օգտագործմամբ «Մաթեմատիկան» կատանա բավականաչափ առօրեական և իրական տեսք, և էապես կհաղթահարվի ուսումնական տվյալ առարկայի նկատմամբ ավանդաբար ձևավորված սովորողների վախը: Գործնական առաջադրանքներն առավելապես կրում են խաղային բնույթ: Հետևաբար դրանք կատարելիս երեխան հաճախ չի էլ գիտակցի, որ մաթեմատիկայի «դժվար» դաս է անելու:

Ուսուցիչը դրանք կարող է օգտագործել և՛ ուսուցանելու, և՛ ստուգելու նպատակով: Ձեռնարկը նաև ունի ներդիր՝ որոշ աշխատանքների համար անհրաժեշտ նյութերով, որոնք պետք է պարզապես բազմացնել, կտրել և օգտագործել